№ 242 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7

1905

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7 № 242

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սխալ հիմնակէտ. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Բագուի կեանքից. Նշաններ երևում են. Յուզմունքները մանջուրական բանակում. Մտքեր և փաստեր. Բաթումի դէպքերը. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղուածքներ թուրք մամուլից. պարսկաթուրքական ընդհարումները. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Տխրահռչակ Բոգուսլավսկին։

ՍԽԱԼ ՀԻՄՆԱԿԷՏ

Մենք մի քանի անգամ խօսել ենք այն պատճառաբանութիւնների մասին, որ առաջ են բերում մարդիկ հայ-թուրքական ընդհարումները բացատրելու համար և յայտնել ենք մեր կարծիքը այդ պատճառաբանութիւնների մասին։

Այս անգամ կանգ կառնենք մի ձևակերպութեան վրա, որ առաջ է մղել սօցիալ-դեմօկրատների համագումար ժողովը։ Այդ ձևակերպութեան մէջ ասված է, որ «հայ-թուրքական ընդհարումների հիմք ներկայանում են հայ-թուրքական մասսաների խաւար և անգիտակից լինելը, մասսաների, որոնք հպատակված են իրանց ազգութիւնների բուրժուա—ազգայնական իդէօլօգների ազդեցութեան։

Դա սխալ է։ Իսկ մի բան, որ սխալ է, նա չէ կարող նպաստել հրապարակում դրած ծանր խնդրի բաւարար լուծման։

Երևոյթը այնպէս է դուրս բերված, որ իբր թէ ներկայումս հայ-թուրքական յարաբերութիւնների հարցում ինչ որ հակասութիւն կայ հայ ժողովրդական մասսաների և հայ ինտելիգենցիայի մէջ, որ հայ ինտելիգենցիան շշմեցրել և հիպնոսացրել է մասսաները իր այնպիսի ձգտումներով, որոնք հակասում են հայ ժողովրդի բարօրութեան և իղձերին։

Մինչդեռ իրականութեան մէջ մենք բոլորովին հակառակն ենք տեսնում։ Հայ ժողովրդական մասսաները իրանք պահանջում են ինտելիգենցիայից չը կորցնել ոտի տակ հողը և չը մոռանալ, որ հայ ժողովրդական մասսաներին սպառնում են մեծ աղէտներ թուրքական անզուսպ հրոսակների կողմից, որոնք ամենևին չեն ոգևորված ներկայումս այն կուլտուրական գաղափարներով, որոնցով ապրում է հայը։

Այն ցաւը, որի մէջ գտնվում է հայ ժողովուրդը, նոյն ցաւն է, որ տասնեակ և հարիւրաւոր տարիների ընթացքում մահի և թշուառութեան է մատնած եղել արևելեան քրիստոնեաներին, յոյներին, բօլգարներին—Լիբանանի քրիստոնեաներին, որ աւերակներ է դարձրել մի ժամանակ ծաղկած Փոքր-Ասիայի ընդարձակ գաւառները։

Թուրքական տգէտ մասսաների ասպատակող և աւերող ոգին, որ ամբողջ տասնիններորդ դարի ընթացքում զըսպված էր կառավարութեան հեղինակութեան ույժով, զանազան պատճառներով, յանկարծ ազատութիւն ստացաւ գործելու և գործեց իր բոլոր զօրութեամբ։

Գնալ և համոզել այժմ հայ ժողովրդին, թէ նա պէտք է խաղաղ լինի, հեզաբարոյ, թէ նա պէտք է զիջող լինի դէպի իր դրացին—դա այն քարոզն է, որ նա դարեր շարունակ լսել է իր կրօնականից, իր ազդեցիկ անձերից։ Եւ իրապէս եթէ հայ ժողովուրդը այժմ սկսել է աւելի խիզախ և բողոքող լինել, այդ ոչ թէ այն պատճառով է, որ նրա կրօնականը և բուրժուան են այդպէս թելադրում, ոչ, այլ ընդհակառակը, նա զզուել է այն մի շարք քարոզներից, որոնք նրան ասում էին համբերիր, մորթվիր, կողոպտվիր և միայն աւետարանական վարդապետութիւնները քարոզիր քեզ վրա յարձակվողներին։ Ժողովուրդը այժմ աւելի լաւ է համարում մեռնել, քան մնալ այն անարգ և ստոր դրութեան մէջ, որ անբաղդացրել է նրա կեանքը դարերի ընթացքում։

Ժողովուրդը ուզում է խաղաղ ապրել, իր արդար վաստակի տէրը լինել։ Նա որոնում է նոյնպիսի խաղաղ և աշխատաւոր հարևանի։ Բայց ինչ անի նա, երբ նրա վաստակը և կեանքը անապահով են և մշտական վտանգի մէջ։

Հայ ինտելիգենցիան այժմ էլ մշտապէս քարոզներ է խօսում ազգերի համերաշխութեան և եղբայրակցութեան մասին, այժմ էլ բոլոր սրտից ցանկանում է, որ իր հարևանը սկսի ապրել լայն կուլտուրական կեանքով և հայի հետ միասին կազմէ մի խոշոր կուլտուրական ույժ երկրի մէջ. բայց թուրքական ոչ միայն մասսաների, այլ և ազդեցիկ անձերի տգիտութիւնը խանգարում են այդ գործին։

Հայ ժողովրդական մասսան ունի և տալիս է իր շահերի բազմաթիւ ներկայացուցիչներ և նա կարող կը լինի կազմել նոր հարազատ ինտելիգենցիա, նոր ոգով։ Բայց այն ընդհարումները, որ հայ ժողովուրդը ունի թուրքերի հետ, դրանք հայ ինտելիգենցիայի բռնած դիրքից և գործունէութիւնից չեն առաջացել։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակի գաւառի փչացած գիւղացիները մեծ կարօտութեան մէջ են։ Բաղա գիւղից եկած քահանան մտադիր է վերցնել իր հետ հագուստեղէն, որպէս զի կարելի լինի պաշտպանել ժողովուրդը ցրտից։

Պէտք է նկատել, որ գիւղը գտնվում է ցուրտ տեղում և այնտեղ ներկայումս ձիւնապատ է։ Ամենամեծ անհրաժեշտութիւն է զգացվում շալերի, վերմակների և վերարկուների։

Մենք կարծում ենք, որ Նպաստամատոյց յանձնաժողովը կարող կը լինի իր հետ եղած հագուստեղէնի պաշարից բաժին հանել Գանձակի գաւառի համար։ Կարօտութիւնը յանկարծ է երևացել և անմիջական օգնութիւնը շատ կարևոր է։

Գանձակի գաւառին օգնելու համար Նպաստամատոյց յանձնաժողովը կարող է նպաստները և իրերը ուղարկել Գանձակ յաջորդարանի անունով։ Իսկ այնտեղ մի յատուկ մարմին կը զբաղվի նպաստները բաժանելու գործով։

—

Թիֆլիսի Նպաստամատոյց յանձնաժողովը որոշել է յատկացնել 5000 րուբլի գումար Գանձակի կարօտեալների համար։ Դա նախնական նպաստն է առաջին զգացված կարիքները լրացնելու համար։

—

Թիֆլիսից դէպի Կարս գնացող երկաթուղու գնացքներում ճանապարհորդների ապահովութեան համար երթևեկում են մի քանի զինուորներ։ Երկաթուղու գծի վրա վերջին օրերս յարձակումներ տեղի չեն ունեցել։

Շուլաւէրից մինչև երկաթուղու Աղստաֆա-Սարալ կոչված կայարան տանող ճանապարհը այժմ ապահով է։ Ճանապարհորդներին ուղեկցում են պահակախմբի զինուորներ։

—

Մեզ հաղորդում են, որ Շուլաւէրի շուրջը տեղի ունեցած թուրքական ասպատակութիւնների ժամանակ փչացվել է Փոքր Շուլաւէր կոչված գիւղը։ Յարձակվող թուրքերը հրդեհել են և աւերել նրան։

—

Գանձակի գաւառից եկողները հաղորդում են, որ Զարդախլուի շրջանում դեռ չեն հանդարտվել թուրքերը, այնպէս որ Զարդախլուի հայերը դեռ երկիւղի մէջ են թէ մի գուցէ նորից խախտվի խաղաղութիւնը և բռնկվեն ընդհարումներ։

—

Գանձակի ժամանակաւոր գեն.-նահ. գեներալ-մայոր Ձիլչերը հեռագրել է Փոխարքային դեկտեմբերի 1-ին. «Նոյեմբերի 30-ին, ժամը 8-ին Գանձակ քաղաքում սալդատի պահակի վրա երկու անգամ գնդակ արձակեցին. բացի այդ բանից՝ քաղաքում ամեն ինչ խաղաղ անցաւ։ Խաղաղութեան բանակցութիւններն առաջ չեն գնում։ Արէշի գաւառապետը զեկուցանում է, որ Մարզուչի հայ գիւղում այրել և կողոպտել են 44 տուն. Ջիվանշիրի գաւառում 700 թուրք շրջապատել էին Սէնէուլան հայ գիւղը. հայերը յարձակվեցին Ջըրախլի և Հաջի-Գէբէվէնդ թուրք գիւղերի վրա։ Նիժեգօրօդեան էսկադրօնի հրամանատարը զեկուցանում է Գետաբէկից, որ Զարդախլու գիւղը շրջապատված է թուրքերով և որ իր ուժերը բաւարար չեն Գետաբէկի ամբողջ շրջանը ազատել աւերածութիւններից։ Զարդախլուի ճանապարհը դէպի երկաթուղին ապահովելու համար ուղարկեցի 50 կազակ։ Շուշից հեռագրում են չափազանց լարված վիճակի և ուտելեղէնների պակասութեան մասին. ձեռք են առնված միջոցներ կենսական մթերքներ հասցնելու համար»։

—

Անցեալ գիշեր Վօզնեսենսկի և Օրլօվսկի փողոցներում մի քանի խուլիգաններ հրդեհ առաջացնելու փորձեր արին։ Մի տուն արդէն սկսել էր այրվել, բայց դաշնակցականների ձեռք առած միջոցների շնորհիվ կրակը հանգցվեց։ Բայց կրակով զբաղվելով, դժբաղդաբար հնար չունեցան ձերբակալելու այդ խուլիգաններին։

—

Կիրակի, նոյեմբերի 3-ին, գիշերվայ ժամի 2-ին 5-րդ քաղաքամասում, Զգրաշէն եկեղեցու մօտերքը շրջող թաղական բնակիչներից կազմած հերթական գիշերապահները բռնել են դարձեալ երկու խուլիգան, որոնք չար դիտաւորութեամբ պտոյտներ են անելիս եղել մօտակայ տների և խանութների շուրջը։ Պիտի ասել, որ համարեա ամեն թաղում կազմած այդ ինքնապաշտպանութեան զինուորները, որոնց մէջ հերթական գիշերապահներ կան և շատ ինտելիգենտներ՝ առանձին աչալրջութեամբ և ճշտութեամբ կատարում են իրանց առանձնած բնակիչների ապահովութեան հըսկողութիւնը և մինչև այժմ՝ շնորհիւ թաղական կարգադիր բիւրօների խելացի գործավարութեան—ազգաբնակութիւնը խուլիգանների ոտնձգութիւններից ազատ է մնացել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Գանձակի կոտորածի ժամանակ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից մի պատգամաւորութիւն գնաց՝ խաղաղացնելու համար։ Այդ պատգամաւորութեան անդամներից մէկն էր պ. Զրեւաձէ։ Վերադառնալով Թիֆլիս, նա սկսեց «Возрожденіе» լրագրի մէջ նկարագրել Գանձակի կոտորածը, յատկապէս պաշտպանելով գեներալ Տակայշվիլիին։ Այդ պաշտօնը ազնիւ պ. Զրեւաձէ յանձն էր առել լոկ այն պատճառով, որ Տակայշվիլին վրացի է։ «Нов. Обоз.» լրագիրը մի շատ գեղեցիկ յօդուածով պատասխանում է չափը մոռացած վրացի նացիօնալիստին։

Այո, պ. Զրեւաձէ, ամօթ է ձեզ այդպիսի բաներ ասել։ Դուք վաղուց պարտաւոր էիք դէն գցել կեղծաւորութեան դիմակը, որ այսքան տարի ծածկած ունէք այնպիսի ճարպկութեամբ։ Բայց հանգստացէք ինքներդ և հանգստացրէք ձեր համախոհներին։ Հաւատացէք, ոչ ոք փորձ չէ արել ձեր ազգային պատուի դէմ և եթէ գեներալ Տակայշվիլիին հասարակական կարծիքը բևեռել է անարգ սիւնին, այդ ոչ թէ այն պատճառով, որ նա վրացի է, այլ որովհետև նա իր յանցաւոր անտարբերութեամբ և անգործութեամբ վառեց Գանձակի նահանգում այն հրդեհը, որը հանգցնելու համար էր ուղարկված և միայն նրա անտակտ և անմիտ գործողութիւնների շնորհիւ է, որ թափվեցին մարդկային արեան վտակներ, այրվեցին գիւղերը, քարուքանդ եղան արտերը, կողոպտվեց նահանգական քաղաքը, հնարաւոր դարձան վերջին օրերի Թիֆլիսի դէպքերը։

Հասկացէք դուք, ազգային շօվինիզմով կուրացածներդ, որ ամեն մի ուրիշ մարդ էլ, որ Տակայշվիլիի տեղը ցոյց կը տար այսքան ապշեցնող անընդունակութիւն, կարժանանար նոյնպիսի վերաբերմունքի հասարակութեան կողմից, անկախ իր ազգութիւնից։

Մի Զրեւաձէ շատ քիչ նշանակութիւն ունի իբրև շօվինիզմով կուրացած նացիօնալիստ։ Այստեղ աւելի կարևորը այն թերթն էր, որ հիւրընկալել է իր էջերում պ. Զրեւաձէի յօդուածը, որի մէջ ասված է թէ «իւրաքանչիւր վրացու պատրաստ են ողջ-ողջ ուտել»։ Շնորհաւորում ենք պ. Գօտուայի թերթը։ Մի քանի ժամանակ առաջ նա անհագին վայնասուն էր բարձրացրել մի զզուելի գաւառապետ Գեղամօվի մասին, յատկապէս շեշտելով թէ նա հայ է, իսկ այսօր նա պաշտպանում է գեներալ Տակայշվիլիի պէս մի արատաւորված մարդուն այն պատճառով, որ նա վրացի է։ Դիմակը պատռվում է և սօցիալ-դեմօկրատական վարագոյրի ետևից երևում են կոյր նացիօնալիզմի ահագին ականջները...

*

Թիֆլիսի միջնակարգ դպրոցների աշակերտները ստեղծեցին իրանց սեփական մամուլը։ Այսօր հրատարակվում են երկու աշակերտական օրգաններ։ Մենք ստացանք այդ օրգաններից մէկը „Эхо“, որ հրատարակում են առաջին գիմնազիայի աշակերտները։ Բոլոր յօդուածները գրված են խիստ արմատական ոգով, որ պատիւ է բերում մեր երիտասարդութեան։ Լրագիրը այնքան դպրոցական հարցերով չէ զբաղվում, որքան քաղաքական—հասարակական։ Եւ սա հասկանալի է։ Ներկայ ժամանակ ամեն ինչ—և՛ դպրոց, և՛ առաջադիմութիւն—կախված է այն հսկայական կռւից, որ մղվում է Ռուսաստանում յանուն ազատութեան։ Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն աշակերտութեան նորածին օրգանին։ Խմբագրութեան ուշադրութիւնը դարձնում ենք այն անհամար սխալների վրա, որոնք խճողում են առաջին համարը սկզբից մինչև վերջ և որոնք ուղղակի աններելի են դարձնում ընթերցանութիւնը։

ԲԱԳՈՒԻ ԿԵԱՆՔԻՑ

I

Պօստ-հեռագրական գործադուլը մեզ այնպէս էր բաժանել Բագուից, որ ամբողջ ժամանակ մեզ հազիւ աջողվեց կարդալ «Баку» լրագրի մի քանի համարները։

Այդ տպագրական նիւթի վրա էլ մենք հիմնում ենք ներկայ մեր տեսութիւնները։ Բայց նախապէս մի դիտողութիւն.—«Баку» լրագիրը այժմ դարձել է սօցիալ-դեմօկրատիայի նեղ կուսակցական օրգան, հետևաբար և ներկայացնում է հասարակական մտքի մի մասը, մի կողմը միայն։

Առաջ լրագիրը այնքան թունդ գունաւորված չէր։ Հայ բուրժուազիայի միջոցներով հիմնված այդ թերթը առաջներում աւելի համբերող էր դէպի միւս ուղղութիւններն ու աշխարհայեցողութիւնները։ Այժմ, իբրև օրթօդօքս սօցիալ-դեմօկրատ, նա ոչինչ փրկութիւն չէ տեսնում իր վարդապետութիւնից դուրս. ով սօցիալ-դեմօկրատիայի դրօշակի տակ չէ, նա կամ բացարձակ թշնամի է, կամ դաւաճան կամ թէ թուլամորթ, յետադէմ արարած։

Ասենք որ այդ մի և նոյն գոյնն ունեն բոլոր սօցիալ-դեմօկրատական թերթերը Ռուսաստանում։ Դեռ նոր միայն ծնունդ առած իբրև լեգալ հրապարակախօսական օրգան, այդ մամուլը արդէն կատաղի կռիւ է յայտարարել բոլոր ոչ-համերաշխ ուղղութիւնների դէմ։ Ո՛չ մի կօմպրօմիս, ո՛չ մի նոյն իսկ ժամանակաւոր համաձայնութիւն ուրիշ գոյն ունեցող կազմակերպութիւնների հետ։

Մենք ամենևին չենք դատապարտում այդ նեղ կուսակցականութիւնը։ Դատապարտող չէ կարող լինել «Մշակը», որ շարունակ նոյն խիստ, գունաւորված վերաբերմունքն է ունեցել դէպի կուսակցական դրօշակը, յարուցանելով իր դէմ ողորմելի անխտրականութեան վայնասունը, որի մի մասը, ի դէպ է ասել, վերջին տարիներս բարձրանում է հէնց այն խմբագրութեան խորքից, որին այժմս պատկանում է «Баку» լրագիրը։

Եւ այսպէս, այդ թերթը այժմ գունաւորված, նեղ կուսակցականութեան է ծառայում։ Մեզ համար հետաքրքրականը միայն այդ չէ։ Ինչպէս երևում է, թերթի մէջ աշխատում են և հայ սօցիալ-դեմօկրատներ, ուստի և յատկապէս ուշադրութիւն է դարձնվում հայ պրօլետարիատի վրա։ Իսկ հայ պրօլետարիատը կազմակերպած մի դասակարգ դարձնելու համար՝ լրագիրը իր հայ աշխատակիցների ձեռքով մի խիստ արշաւանք է սկսել հայոց ազգային—յեղափոխական կուսակցութիւնների, այն է՝ «Հնչակի» և մանաւանդ «Դաշնակցութեան» դէմ, նոյնպէս և հայ ինտելիգենցիայի և բուրժուազիայի դէմ։

Այդ արշաւանքի մասին մենք յետոյ կը խօսենք։ Առ այժմ մի քանի բնորոշ փաստեր։

Օրվայ հրատապ հարցը, ի հարկէ, թուրք-հայկական ընդհարումներն են։ Լրագիրը իր բոլոր ույժերով աշխատում է հրամայող դիրք, հեղինակաւոր դատաւոր հանդիսանալ այդ զարհուրելի արիւնահեղութիւնների մէջ։

Սօցիալ-դեմօկրատիան մի է ամեն տեղ։ Եւ ասել թէ Բագուի սօցիալ-դեմօկրատական օրգանը մի որ և է նոր լուսաբանութիւն կարող է մտցնել ամբողջ Արևելեան Անդրկովկասը քարուքանդ արած կոտորածների պատճառների բացատրութեան մէջ, կը նշանակէ անպատւել սօցիալ-դեմօկրատիան, որ միշտ և ամեն տեղ ունի բացատրութիւնների գրած ու կնքած ձևակերպումներ—բուրժուազիա իր իդէօլօգներով, պրօլետարիատ—և ահա ամեն ինչ վերջացաւ։

Առաջներում լրագիրը հայ-թուրքական ընդհարումների մէջ ուրիշ գործօններ էլ էր տեսնում—կանաչ չալմաներ, արտասահմանեան ագիտացիա, քաղաքական տիրապետութեան հովեր և այլն։ Պ. Օրեստ Սեմինը, որ այժմ սօցիալ-դեմօկրատական թերթի մէջ կարծում ենք առաջին ջութակահարներից մէկն է, ամառվայ սկզբում, Նախիջևանի գաւառը այցելելուց յետոյ, Թիֆլիսում դասախօսութիւն կարդաց, փոխարքային ծրագիր ներկայացրեց, որոնց մէջ բուրժուա-իդէօլօգօ-պրօլետարիական բաժինը բաւական թոյլ էր, իսկ կոտորածների ընդհանուր պատճառները աւելի քաղաքական-կրօնական և այլ ֆակտօրներով էր բացատրում։ Յիշում ենք, ականատես պարոնը ի թիւս այլ միջոցների առաջարկում էր զօրքեր շատ ուղարկել, ամենախիստ պատժի ենթարկել թուրք գլխաւորներին, ղեկավարողներին։

Այժմ այդ բոլորից դուրս է շպրտվել ամեն ինչ, որ սօցիալ-դեմօկրատական չէ և մնացել է անփոփոխելին, յաւիտենականը—բուրժուազիա և պրօլետարիատ։

Այստեղ քննադատութիւններով, հակաճառութեամբ չենք զբաղվում։ Մենք միայն պատմում ենք այն, ինչ կարդացել-իմացել ենք։

Շատ լաւ, թող անհերքելի ճշմարտութիւն լինի սօցիալ-դեմօկրատիայի ձևակերպութիւնը։ Թող արիւնոտ դէպքերը բղխած լինեն հէնց այն պատճառներից, որ ցոյց է տալիս սօցիալ-դեմօկրատիան։ Խնդիրը, անյետաձգելի խնդիրը այն է, որ վերջ տրվի խայտառակ արիւնահեղութիւններին։

Վերջ կը տրվի։—Սօցիալ-դեմօկրատիան ոգևորված, սուրբ հաւատով լցված՝ ասում է որ կը տրվի։ Եւ դնողը կը լինի միայն ինքը, ուրիշ ոչ ոք, միայն կազմակերպված պրօլետարիատը։ Այսպէս են ասում Բագուում։ Բայց Բագուից առաջ այդ կարող, հուժկու ձայնով խօսեց Թիֆլիսի սօցիալ-դեմօկրատիան։

Խօսեց և հրապարակ եկաւ։ Նա զինված էր, նա ոգևորված էր արիւնահեղութիւնը դադարեցնելու ամենաանկեղծ ցանկութեամբ։ Մենք հիանում էինք նրա հերոսութիւնների վրա, մենք միշտ էլ հիացմունքով կը յիշատակենք մարդկայնութեան այդ զինուորներին Թիֆլիսի փողոցներում օր ու գիշեր հսկելիս, ցրտի մէջ, անձրևի տակ, արհամարհելով գնդակների տարափը։ Բայց յանկարծ... դաւաճանական մի յարձակում այդ անբիծ խաղաղարարների վրա, որոնցից մէկը նահատակվեց տեղն ու տեղը։ Եւ սօցիալ-դեմօկրատիան ստիպված եղաւ յետ քաշվել, հեռանալ արեան դաշտից, խոստովանելով թէ դա յարձակում չէ, ասպատակութիւն չէ, այլ մի զարհուրելի պատերազմ այնպիսի միջոցներով, որոնք չեն ընդունված քաղաքակիրթ մարդկութեան մէջ։

Եւ ուսից վերցնելով հրացանը, Թիֆլիսի սօցիալ-դեմօկրատիան յայտարարեց թէ այդ պատերազմին վերջ դնել կարելի է միայն երկու կողմերի պրօլետարիատը դասակարգային գիտակցութեան հասցնելով պրօպագանդայի միջոցով։

Բագուի սօցիալ-դեմօկրատիան այդպիսի դառն փորձ չէ ունեցել և Աստուած տայ որ երբեք, երբեք չունենայ։ Բայց նա էլ վճռել է փորձել նոյն միջոցներով—զինվելով, զօրաբաժիններ կազմակերպելով ինքնապաշտպանութեան համար և խաղաղ պրօպագանդայով։

Զինվելու մասը դեռ ծրագիր է, իսկ պրօպագանդան արդէն սկսվել է։ Կազմվում են միտինգներ, կոչ են անում երկու կողմերի պրօլետարիատներին։ «Կազմակերպվեցէք, մահմեդական-բանւորներ և գիւղացի ստրուկներ։ Կազմակերպվիր, հայ պրօլետարիատ»։ Դիմադրող ույժերի կազմակերպութեան համար շատ ջանքեր են արվում։ Հայ և թուրք աշակերտները միտինգ են կազմում, որոշում են պրօպագանդա սկսել։ Մի մասը ցոյց է տալիս թէ որքան դա դժուար է և նոյն իսկ անպտուղ։ Այդ մասին լրագիրը տալիս է նացիօնալիստ անունը, իսկ միւս մասը սօցիալ-դեմօկրատ է, քանի որ «խոստովանելով ագիտացիայի ամբողջ դժուարութիւնը, մանաւանդ տեղի ունեցած սարսափներից յետոյ, արդարացի կերպով ցոյց էին տալիս թէ իրանց առջևում կայ արդիւնաւոր աշխատանք և ժողովրդի ապագայի համար ոչինչ չը պիտի կանգնեցնէ սօցիալիզմի քարոզութիւնը»։

Մի ուրիշ միտինգ էլ կազմվում է բոլոր ազգութիւնների աշակերտներից։ Հարց է դրվում, որ աշակերտական ինքնապաշտպանութիւն կազմակերպվի, բայց այդ առաջարկը մերժվում է, իսկ նրա տեղ ընդունվում է խաղաղասիրական թափօր կազմել սպիտակ դրօշակներով, որոնց վրա գրված կը լինի. «Բագու քաղաքի բոլոր ազգութիւնների սովորող երիտասարդութիւնը կոչ է անում հայ և մահմեդական քաղաքներին և բոլոր ազգութիւններին դէպի խաղաղութիւն և խնդրում է անկեղծ եղբայրութեամբ ձեռք մեկնել միմեանց»։

Ազնիւ ձգտումներ, համակրելի ջանքեր։ Բայց արդեօք շատ չեն փորձված այդ միջոցները։ Արդեօք թափօրներ, ճառեր, համբոյրներ քի՞չ են եղել տասն ամիսների արիւնահեղութեան ընթացքում։

Սօցիալ-դեմօկրատիան գիտէ որ եղել են, բայց նա հաւատացած է, որ միայն իր կազմակերպած խաղաղարարական թափօրները կարող են իրական օգուտ տալ։ Մի կողմից կարևորութիւն տալով աշակերտական սպիտակ դրօշակներին և նրանց մակագրութիւններին, նա միւս կողմից սաստիկ հակառակվում է որ նոյն խաղաղարարական ջանքերին անեն երկու կողմերի հոգևորականները և ինտելիգենցիան։ Ինչո՞ւ.—Որովհետև միայն պրօլետարիատն է կարող, միայն նա է հզօր և բացի նրանից ոչինչ չը պիտի երևայ հասարակական ասպարէզի վրա։

«Մենք չը գիտենք թէ ինչ կապ կայ մի կողմից հայոց կաթողիկոսի ու հայ ինտելիգենցիայի և միւս կողմից հայ պրօլետարիատի մէջ»։

Այստեղ թոյլ տուէք, ընթերցող, փակագծերի մէջ մի փոքրիկ տեղեկութիւն բերել։ Գիտէ՞ք ով է այն լրագրի խմբագիրը, ուր տպված են այս տողերը։ Նայում ենք և հազիւ հաւատալով մեր աչքերին, կարդում ենք. «Ժամանակաւոր խմբագիր Կ. Նազուբեանց»։ Յիշատակութեան արժանի թէ անարժան «Արձագանքի» մի ժամանակվայ սիւներից մէկը, որ աւելի լաւ գործադրութեան արժանի մի եռանդով տարիներ բանակռիւ էր մղում «Մշակի» դէմ կղերական խաւարամտութիւնը պաշտպանելու համար, «Արձագանքի» այն օրերի աշխատակիցը, երբ ժողովրդական համահաւասար ընտրութիւնները, «Մշակի» այդ վաղեմի սկզբունքը ոչնչացնելու համար կատաղած կղերամոլութիւնը պահանջում էր ցէնզ մտցնել ծխական ընտրութեան մէջ, այն էլ ինչ ցէնզ—ընտրելու, ձայն տալու իրաւունք պիտի ունենար միայն նա, ով ամեն տարի հաղորդվում է։ Այդպիսի մի թերթի աշխատակիցը այսօր սօցիալ-դեմօկրատական լրագրի խմբագիր է և թոյլ է տալիս, որ ասվի թէ հայոց կաթողիկոսի և հայ պրօլետարիատի մէջ ոչինչ կապ չը կայ, թէ դրանք իրար հակառակ, իրար թշնամի կողմեր են։ Ո՜վ ժամանակներ։ Երևակայել կարելի է, թէ ինչպէս ճռնչում էին «Արձագանք» լրագրի թերթերը իրանց մոռացութեան գերեզմանի մէջ։

Քաղաքացի Կ. Նազուբեանի այս կերպարանափոխութիւնը մենք ամենևին չենք դատապարտում։ Ընդհակառակն—լաւ է ուշ, քան երբէք։

Այս փոքրիկ շեղումը հարկաւոր էր pro domo sua. Փակենք մեր փակագիծը։

Եւ այսպէս ահա, սօցիալ-դեմօկրատիան կատարեալ յոյս ունի թէ կազմակերպելով թուրք-հայկական պրօլետարիատ, հէնց դրանով վերջ տուած կը լինի արիւնահեղութիւններին։

Մեծ գործ։ Ո՜րքան հերոսական ջանքեր են հարկաւոր այդպիսի կազմակերպութիւն ստեղծելու, անխախտ գիտակցութեամբ զինելու համար։ Մենք մի րոպէ անգամ չենք կասկածում, որ պրօլետարիական միութիւնը կովկասեան ազգերի մէջ առաջ կը բերէ անթիւ բարիքներ-սօցիալիզմի տեսակէտից։ Բայց կարո՞ղ է հայը հաւատալ, թէ իրան կը թողնեն հանգիստ ապրել մինչև որ պրօլետարիատը կը պատրաստէ «սօցիալական դրախտ» մեր երկրում։ Ո՞ւր է երաշխաւորութիւնը թէ ագիտացիան հրաշքներ կը գործէ մի կարճ միջոցում։

Շատ հետաքրքրական, շատ նշանաւոր մի գործի է ձեռնարկում սօցիալ-դեմօկրատիան։ Մենք հաւատում ենք այդ գործի աջողութեան վերջնական յաղթանակին։ Բայց չենք հաւատում, թէ այսօրվայ զարհուրելի դրութիւնը մի կողմ կը քաշվի, թոյլ տալով որ հսկայական ձեռնարկութիւնը, որի համար տասնեակ տարիներ են հարկաւոր, հանգիստ առաջ ընթանայ բուրժուական և ազնուական-ֆէօդալական երկաթէ կապանքները ջարդելու համար։

Չենք հաւատում, որովհետև լաւ ճանաչում ենք մեր հարևաններին։ Դարերով մութ ու ֆանատիկոս մնացած, դարերով շղթայված տգիտութեան, կրօնամոլութեան մէջ։ Ինչ էլ ասելու լինէք հայ բուրժուազիայի և ինտելիգենցիայի մասին, բայց չէք կարող ուրանալ, որ սրանք բաւական հող են պատրաստել հասարակ հայ ժողովրդի մէջ իրանց դպրոցներով և գրականութեամբ, մի հող, որի վրա այսօր ձեր ագիտացիայի սերմերը կարող են արմատ բռնել։ Հայ բանւորը այսօր առանց սարսափի կը լսէ ձեր բերանից, որ նրա և հայոց կաթողիկոսի մէջ ոչինչ կապ չը կայ։ Բայց թուրքը։ Կարո՞ղ է նա, կրօնական աւանդութիւններով, ծէսերով կաշկանդված այդ խեղճը նոյնպէս լսել այդպիսի մի խօսք իր հոգևորականի մասին։ Անհատներ կը լինեն, ի հարկէ, բայց մասսան... Օ՛, երկար ու երկար ժամանակ է հարկաւոր։

Փոքրիկ պրօլետարիական խմբերով չը պէտք է ոգևորվել։ Թուրք ազգաբնակութիւնը աւելի մեծ դժուարութեամբ է ենթարկվում կապիտալիստական կարգի օրէնքներին։ Մի մոռանաք որ կուլտուրան դեռ չէ հասել թուրքերի այն ահագին մասսային, որ այսօր էլ նօմադների կեանք է վարում։

Հայ բանւորին դուք շարունակ քարոզում էք, որ նրա թշնամին հայ բուրժուան է, հոգևորականն է, ինտելիգենտն է, որ եթէ չը լինեն դրանք, ինքը, այդ աշխատաւոր բազմութիւնը, չէր կոտորվի։ Վէճը, հակաճառութիւնը մի կողմ թողնենք։ Բայց համաձայնվեցէք որ այդպիսի քարոզներով կարող էք այնպիսի դրութիւն ստեղծել, որ հայ բանւորը կը սկսէ մոռանալ, որ գոնէ այս րօպէին ունի թշնամի, կը մատնվի անհոգութեան և ով գիտէ—գուցէ նորից կրկնվի օգոստոսեան աղէտը, երբ նա Բալախանիում, Բիբի-Էյբաթում կը ջարդվի, առանց որ և է օգնութիւն ստանալու իր դասակից բանւորներից։ Չէ՞ որ սա փաստ է, չէ՞ որ սարսափի ու տագնապի մէջ պրօլետարիատը միանգամայն գլուխ կորցրեց, թշուառութեան անդունդը գլորվեց։

Այս պատճառով մենք կարծում ենք, որ միտինգների, ագիտացիայի հետ միասին չը պէտք է մոռանալ և ամենագլխաւորը—զինված ինքնապաշտպանութիւնը...

(Կը շարունակվի)

ՆՇԱՆՆԵՐԸ ԱԿՆԵՐԵՒ ԵՆ

Վաղուց լուրեր էին պտտում թէ ռէակցիան կարող է գլուխ բարձրացնել կառավարութեան շրջաններում։ Հասարակութիւնը չէր ուզում հաւատալ։ Նա համոզված էր, որ հոկտեմբերի 17-ի ազատութիւնները ամուր կերպով են նուաճված ժողովրդական բոլոր խաւերի միահամուռ գործակցութեամբ, որ կառավարութիւնը վերջնականապէս անձնատուր է եղել և այլ ևս չէ կարող յետ և յետ գնալ։

Սակայն այժմ նշանները ակներև են։ Կառավարութիւնը գործում է բաւական աչքի ընկնող եռանդով։ Պօստ-հեռագրական ծառայողների դէմ գործադրվեցին ամենախիստ միջոցներ։ Նոր տպագրական օրէնքի հիման վրա արգելվեցին առաջադիմական բանակի համարեա բոլոր լրագիրները։ Մինիստրների խորհրդի նոր կայացրած վճռով դարձեալ բացառիկ, լայնարձակ իրաւունքներ դրվեցին գեներալ-նահանգապետներին, նահանգապետներին և այլ իշխանաւորներին շարժումները խեղդելու համար: Այդ բացառիկ իրաւունքները պէտք է գործադրվի նոյն իսկ այնպիսի տեղերում, ուր չէ մտցրված սաստկացրած պահպանութիւն կամ զինուորական դրութիւն: Հրատարակվեցին նոր օրէնքներ գործադուլների և պրօֆէսիօնալ ընկերակցութիւնների մասին, որոնց մէջ, ինչ կասկած, բիւրոկրատիական սահմանափակումները առաջին տեղն են բռնում:

Կեանքը իսկապէս նուաճել է ազատութիւններ և գործադրում է նրանց լայն չափերով: Կառավարութեան կարգադրութիւնները ազատութիւններ չեն տալիս, չեն երաշխաւորում, այլ միակ նպատակ ունեն սահմանափակել, կրճատել կեանքի իրականացրած ազատութիւնները:

Ահա և այժմ, ներկայ միջոցին, ինչ է մնում հոկտեմբերի 17-ի խոստումներից: Նշանները ակներև են: Կոմս Վիտտէի կառավարութիւնը սկսել է հսկայական ջանքեր անել հասարակութիւնը յետ ու յետ քաշելու համար:

Կաջողվի՞ այդ: Մենք չենք հաւատում: Բայց ակներև է և մի բան: Այն, որ կռիւը աւելի պիտի բարդանայ, որ երկրի ցնցումները աւելի պիտի սաստկանան: Յետադէմ քաղաքականութիւնը այնպիսի յեղափոխական ժամանակում կարող է միայն կորստաբեր լինել: Բայց ում վրա պիտի ծանրանայ այդպիսի ընթացքի պատասխանատուութիւնը:

Պարզ է թէ ում վրա...

ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՆՋՈՒՐԱԿԱՆ ԶՕՐԱԲԱՆԱԿՈՒՄ:

«Свободное Слово» լրագիրը հաղորդում է, որ, Պետերբուրգում հէնց նոր ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, Խարբինում բանակ դրած զօրաբանակի գնդերից մէկում ապստամբութիւն բռնկվեց, որը արագութեամբ տարածվեց և մի քանի ուրիշ գնդերում: Ապստամբութեան հէնց սկզբին ապստամբված զինուորները սպանեցին մի քանի գեներալների և շտաբ—օֆիցերների: Սպանվածների անունները դեռ ևս ճիշտ յայտնի չեն Պետերբուրգում:

«Matin» լրագրի Մանջուրիայից ստացած վերջին տեղեկութիւնների համեմատ, այնտեղ մի ինչ որ սարսափելի բան է կատարվում, ոչ մի դիսցիպլինա չէ մնացել զօրքի մէջ, զինուորները համարեա ամեն օր խռովութիւններ են յարուցանում: Խարբինը կատարելապէս կողոպտված է. գեներալ Լինևիչի դրութիւնը շատ դժուար է:

Մանջուրական զօրաբանակների զետեղման տեղից այսօր երկիւղալի հեռագիրներ են ստացված: Չինական և սիբիրական երկաթուղիների ծառայողները աղերսում են հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեամբ չուշացնել ածուխով գնացքները դէպի Սիբիր, որովհետև զինուորները, կարծելով որ գնացքների ուշացնելը գործադուլի հետևանք է, սպառնում են սպանել այդ ծառայողներին, համարելով նրանց մեղաւոր այն բանում, որ իրանք մինչև այժմ չեն կարողանում հայրենիք վերադառնալ:

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XIX

Մենք բերում ենք այսօր մի շարք փաստեր, որոնք ցոյց կը տան թէ ինչպէս են վերաբերվում մեր հարևան վրացիները Թուրք-հայկական արիւնահեղ ընդհարումներին և ինչ գաղափար են կազմել նրանց մասին:

Ամենից առաջ աչքի է ընկնում մի տարօրինակ երևոյթ. վրաց հասարակութեան և մամուլի մէջ ոչ ոք մինչև այսօր հետամուտ չեղաւ, չաշխատեց քննել և հաստատել, թէ իսկապէս ով է հանդիսանում յարձակվող կողմ, ով պաշտպանվող, կամ գոնէ սկզբում ով է հանդիսացել յարձակվող, ով պաշտպանվող—հայը թէ Թուրքը: Այս կէտը Թուրք-հայկական ընդհարումների հարցի մէջ ամենակարդինալ կէտն է, որովհետև այդ ընդհարումների ամբողջ պատասխանատուութիւնը պէտք է ընկնի այն կողմի վրա, որն հանդիսացել է յարձակվող, որը նախայարձակ է եղել. նաև պէտք է ճանաչվի, հրատարակվի յանցաւոր ապագայում տեղի ունեցած բոլոր դէպքերի համար, իբրև հետևանք այդպիսի ագրէսիվ գործողութեան, հետևաբար և դատապարտվի ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան առաջ: Այդ պարագայում վրաց հասարակութիւնը ոչ մի անգամ չը կամեցաւ յայտնել թէ ով է յարձակվող, ով է պաշտպանվող կողմը: Երբ կառավարութիւնն է այդպիսի ընթացքը վերցնում, դա հասկանալի է. նա ինքը շատ լաւ գիտէ, ով է յարձակվողը, ով է պաշտպանվողը. նրան ձեռնտու չէ ճշմարտութիւնը յայտնել, մերկացնել. նրան պէտք է պղտոր ջրում ձուկ որսալ: Բայց վրաց հասարակութիւնը, իբրև չէզոք և կողմնակի հանդիսատես տարր, բարոյական վսեմ պարտականութիւն ունէր պարզել այդ հարցը:

Բայց նա այդպէս չը վարվեց:

Նրա մի մասը յայտնի տրամադրութիւն ցոյց տուեց և ամենևին չը քաշվեց ոչ միայն հայերին համարել մեղաւոր, այլ և յայտնապէս իր համակրութիւնը արտայայտել Թուրքերին և այն պաշտօնեաներին, որոնք գործում էին Թուրքերի հետ միացած հայերի դէմ, ինչպէս Նակաշիձէ, Ալիխանով, Տակայշվիլի, գաւառապետ Ջերքեզով և այլն: Միւս մասը, այն ևս պրօգրէսիստ համարվող և նոյն իսկ սօցիալ-դէմօկրատիայի լօզունգի տակ գործող մասը իր արդարադատութիւնը նրանով էր արտայայտում, որ կամ աշխատում էր Թուրքերին չքմեղ դուրս բերել, բարդելով յանցանքը կառավարութեան և պրօվօկացիայի վրա, կամ, իբրև ամենաբարձր անաչառութիւն՝ հաւասարապէս երկու կողմերին էլ—հայերին և Թուրքերին յանցաւոր և պատասխանատու էր հրատարակում, ստանձնելով իր վրա խաղաղարար միջնորդի և ոչ իրաւարարի դեր:

Արդ, Թուրք-հայկական արիւնահեղ ընդհարումները այն տեսակի չեն, որ, կարելի լինի ասել, թէ երկու կռւող կողմերն էլ յանցաւոր են. անպատճառ, մի կողմն յանցաւոր, միւսը անպարտ է և հետևաբար, այստեղ պէտք է ոչ թէ խաղաղարար միջնորդութիւն, այլ իրաւարարութիւն, այսինքն արբիտրաժ. պէտք է ամենից առաջ լուսաբանել, հաստատել ով է յանցաւոր, ով անմեղ, հրատարակել և ապա արդէն հանդէս գալ խաղաղասիրական միսիայով:

Մենք հայերս, ամենևին պէտք չունինք, ամենևին չենք խնդրում, որ մեզ ասեն. «Թուրքն էլ է մեղաւոր, դու էլ, եկէք հաշտեցնենք ձեզ». ոչ, մենք պատրաստ ենք հաշտվել, մենք յօժար ենք մեր զէնքը վար դնել, բայց միայն մի պայմանով, որ առաջ քննվի, հաստատվի թէ ով է եղել յարձակվող, ով պաշտպանվող, մենք թէ Թուրքերը, ում վրա է ընկնում սոսկալի պատասխանատուութիւնը այն աւերիչ արշաւանքների, սրածութեան, աւարառութեան, հրկիզման գործողութիւնների, այն քաօսի, որոնց մէջ ընկղմվել է մեր երկիրը 10 ամսից ի վեր և որոնք կանգնեցրել են երկրի կուլտուրական առաջընթացութիւնը:

Եթէ կառավարութիւնն է միակ յանցաւորը և նրա պրօվօկացիան, եթէ Թուրք տարրը հանդիսացել է լոկ գործիք, միայն կրաւորական դեր է կատարել, թող այդպէս էլ հրատարակվի. եթէ հայերս ենք մեղաւոր, եթէ մենք ենք պատճառ եղել այն բոլոր աղէտների, թող յայտնեն մեզ. իսկ եթէ Թուրք տարրը ոչ միայն գործիք է եղել, այլ և ներգործական դեր է խաղացել, դիտմամբ, որոշ սխեմով և ծրագրով իր ձեռքը բարձրացրել է մեր վրա, թող այդպէս էլ յայտարարվի: Մենք պէտք չունինք կարեկցութեան, գթութեան. մենք պահանջում ենք արդարադատութիւն և յանցաւորի դատապարտութիւն:

Բայց վրաց հասարակութիւնը երբէք այդ շաւղով չընթացաւ, երբէք տրամադրութիւն ցոյց չը տուեց արդար իրաւարարի դեր կատարել:

Բերենք փաստերը:

Լ. Կիպիանի «Возрожденіе» թերթի մէջ (№ 37) «խաղաղ ազգաբնակութեան իրաւունքը» վերնագրով մի յօդուածի մէջ, դիմելով միաժամանակ հայերին և Թուրքերին, յանդիմանում է նրանց և զայրոյթ յայտնում, որ իրար հետ կռվելով, իրար սպանելով, նրանք ամենևին չեն մտածում, որ դրանով վնասում են խաղաղ և չէզոք ժողովրդին, վրդովում են նրանց, գրգռում ջղերը և խանգարում նրանց կուլտուրական զարգացումը:

«Դուք, հայեր և Թուրքեր—գոռում է նա—ոտնակոխ արիք խաղաղ ժողովրդի նուիրական իրաւունքը, նրա պահանջը, որ չը մտցնէք նրա կեանքի մէջ վայրենի սարսափներ: Ամբողջ 10 ամիս ձեր մէջ տեղի է ունենում սարսափելի, աւազակային ներքին կռիւ: Ամբողջ 10 ամիս լարվել են մեր ջղերը, արիւն, հառաչանք—ողբ, արտասուք ենք տեսնում և լսում: Մեր կանայք, մեր մայրերը, մեր քոյրերը չը գիտեն ինչ է հանգստութիւնը: Մեր երեխաները, մեր խեղճ, անմեղ զաւակները, այնքան ջղոտ են դարձել, լսելով ձեր մէջ կատարվող անմիտ ամօթալի մենամարտութեան սարսափները: Մենք ամենքս, որ հոգեկան կսկիծով նայում էինք հեռուից Բաքւի, Շուշու, Երևանի, Նախիջևանի և Գանձակի արիւնով նկարված պատկերներին, այժմ էլ Թիֆլիսի սարսափներին վկաներ ենք դարձել: Մեզ ասում են, որ այդ արիւնազանգ—ծիրանագոյն պատկերների ստեղծման մէջ նկատվում է ճարպիկ համառուսական պրօվօկատորի ձեռքը: Գուցէ այդ ճիշտ է: Բայց միթէ դրանից պատկերը փոխվում է: Արիւնը հոսում է, մարդիկ շարունակում են գազանանալ և մարդը, խելացի արարածը—homo sapiev-ից դառնում է երկոտանի անասուն, ինչ որ մի bipedum crueffe: Եւ ինչպէս անուանել այն թեթևութիւնը, որով դուք ենթարկվում էք ոստիկանական սրիկայութեան գրգռիչ ձայնին: Եւ բոլորովին կորցնելով ձեր գլուխը, յարձակվում էք միմիանց վրա, ամենևին չը մտածելով, թէ ինչ սարսափ է մտցնում ձեր այդ պատերազմը «ձեր մօտիկ հարևանների կեանքի մէջ»:

Լևան Կիպիանին յայտնի է, գոնէ վրաց հասարակութեան մէջ, իբրև աչքի ընկնող հասարակական գործիչ: Արդ, այդ հասարակական գործչի մէջ մեր հայերի կրած սոսկալի աղէտը արթնեցնում է զայրոյթ միայն նրա համար, որ վրդովում, խանգարում է խաղաղ (իմա վրացի և ռուս) ժողովրդի հանգստութիւնը: Մի րոպէ անգամ պ. Կիպիանին իրան չէ տալիս այսպիսի մի հարց: «Իսկ եթէ հայի վրա յարձակվում է Թուրքը, միթէ նա չը պէտք է պաշտպանվէ, աշխատէ կեանքը փրկել, միթէ նա այդ միջոցին կարող է մտածել, թէ իր ինքնապաշտպանողական կռւով կարող է վրդովել իր հարևանի հանգստութիւնը, գրգռել նրա ջղերը»:

Ուրեմն, հայ, երբ Թուրքը սպանում է քեզ, հրդեհում քո տունը, մորթում աչքիդ առաջ քո երեխային, կնոջը—դու մի կռուիր նրա դէմ, մի աշխատիր սպանել այդ մարդասպան, աւազակ Թուրքին, որովհետև դրանով դու կարող ես վրացու և ռուսի խաղաղութիւնը վրդովել:

Որպիսի անսիրտ վերաբերմունք:

Վրացի հասարակական գործչի այդ չքնաղ դատողութիւնից պակաս չքնաղ դատողութիւն չէ անում և Վլադիմիր Կարբելսկին «Н. Обозр.» թերթում (№ 250):

Նա դիմում է հաւասարապէս հայերին և Թուրքերին և պախարակում, որ նրանց անմտութեան, բորբոքված կրքերի պատճառով, Կովկասեան կեանքը կորցրել է իր բոլոր շարժիչները, և «խաւարամիտ-ռէակցիօներները», լոյսը հանգցնողները մեծ ցնծութեան մէջ են: Ինձ պէտք չէ, ասում է պարոնը, թէ ով է մեղաւորը, ով է արդարը, ով է նախայարձակ եղել: Միթէ, փաստաբանում է նա, չարութիւնը մտաւ աշխարհը նրա համար, որ Կայենը սպանեց Աբէլին և ոչ Աբէլը Կայենին:

Հիանալի դատողութիւն:

Ուրեմն Կայենը, որ բարձրացրեց ձեռքը եղբօր վրա, նոյնչափ մեղաւոր է, որչափ Աբէլը, որ եղբօր վայրագ նախանձի զոհ դարձաւ և անմեղ էր:

Խնդիրն էլ հէնց այն է, որ չարութիւնը աշխարհը մտցրեց ոչ թէ Աբէլը, այլ Կայենը և մարդկութիւնը յաւիտենական անէծքի ենթարկեց Կայենին և ոչ Աբէլին:

Խնդիրը հէնց այն է, որ քննէք, որոշէք, թէ ներկայ Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ ով խաղաց Կայենի դերը, ով Աբէլի դերը:

Բայց ինչու չէք կամենում քննել և որոշել, ով է Կայենը, ով է Աբէլը, որպէս զի ամբողջ անէծքը թափվի Կայենի գլխին և ոչ Աբէլի, որ ոչ մի մեղք չունի:

Ասել թէ երկուսն էլ յանցաւոր են, մեղադրել և հային և Թուրքին, դրանով դուք չէք որոնում չարիքի բուն արմատը և չէք վերացնում չարիքը: Որքան ժամանակ դուք մեղաւորին յանցաւորից չէք ջոկի, որքան ժամանակ դուք մեղաւորի երեսին չէք պոռայ hands of, ձեր ջղերը շարունակ կը գրգռվեն և ձեր հանգստութիւնը կը խանգարվի:

Շահրիար

ԲԱԹՈՒՄԻ ԴԷՊՔԵՐԸ

17-ին նոյեմբերի

Այսօր ժամը մօտ 11-ին, 5 կազակ օֆիցէրներ ներս խուժեցին տեղիս „Чер. ВѢстникъ"-ի խմբագրատուն և պահանջեցին խմբագրին: Խմբագիրը այդտեղ չը լինելով, նրանք ասում են, որ ժամը 2-ին նորից կը գան, աւելացնելով, որ եթէ խմբագիրը իրանց ձեռքը չի յանձնի ամսիս 15-ին «Чер. ВѢст.»-ի № 175-ի մէջ զետեղված «Вопль казака» յօդուածագրին կամ իսկական ձեռագիրը, նրանք տակն ու վրա կանեն խմբագրատունը: Այդ տարօրինակ դէպքի լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ քաղաքում և ամեն կողմից հասարակութիւնը դիմեց դէպի խմբագրատուն: Տեղիս յեղափոխական կազմակերպութիւնները սկսեցին զինված խմբեր ուղարկել՝ խմբագրատունը պաշտպանելու համար: Կազակ օֆիցէրների վարմունքի մասին խմբագրութիւնը տեղեկութիւն տվեց նահանգապետին, կոմենդանտին, կազակների հրամանատարին, պրօկուրօրին: Այս տեղեկութիւնների հետ միասին խմբագրութիւնը յայտնել էր նահանգապետին, որ եթէ չը զսպվի յիշեալ օֆիցէրների սանձարձակութիւնը, կարող են շատ վատ հետևանքներ տեղի ունենալ:

Ժամը 2-ին 5-ի փոխարէն գալիս են 3 օֆիցէր. Նրանք նկատելով, որ խմբագրութեան չորս կողմից «վատ հոտ է գալիս», հաւաստացնում են խմբագրութեան, որ իրանք ոչ մի չար դիտաւորութեամբ չեն եկել այդտեղ և պահանջում են, որ հեռացնեն այդ զինված մարդկանց: Նոյն միջոցին օֆիցէրներից մէկը մօտենում է հեռախօսին և ինչ որ մի բան խօսում, որից չանցած մի քանի րոպէ, 50 կազակ են յայտնվում խմբագրատան առաջ: Վերջապէս, բարեբախտաբար, առանց որ և է լուրջ միջադէպի կազակ օֆիցէրները հեռանում են խմբագրութիւնից (խմբագիրը չէ լինում այդտեղ) հետևեալ ուլտիմատումը դնելով նրան. 1) յանձնել իրանց ձեռքը «Вопль казака»-ի (կազակի հառաչանք) ձեռագիրը, որով իրանց հնարաւորութիւն կը տրվի գտնել նրա հեղինակին. 2) խմբագիրը առաջին երեսի վրա մեծ-մեծ տառերով ներողութիւն պէտք է խնդրէ այդ յօդուածին տեղ տալու համար և 3) նոյնպիսի ներողութիւն խնդրէ նաև ամբողջ կազակների կողմից: Չենք կարծում, որ խմբագրութիւնը այդ երեքից մէկը գոնէ ընդունէ, հասարակութիւնը չի էլ թոյլ տայ, որ ընդունէ:

Այդ բոլորից յետոյ աւելորդ չեմ համարում մօտաւոր կերպով ներկայացնել ընթերցողին նաև այդ բոլորի պատճառ վերոյիշեալ «Вопль казака» յօդուածի բովանդակութիւնը. Նա մօտաւորապէս հետևեալն է.

«Լաբինեան 2-րդ գնդի կազակները կանչված էին Հեռաւոր Արևելք գնալու՝ կրօնի, Թագաւորի և հայրենիքի պաշտպանութեան համար: Մենք էլ էինք բոլոր սրտով ցանկանում այնտեղ գնալու, բայց մեզ չը տարան այնտեղ, այլ քշեցին այս կողմերը՝ մեր եղբայրներին խաղաղացնելու համար, որոնք իրանց աշխատանքի վարձը չեն ստանում: Ինչու չեն ապստամբվում կալուածատէրերը, գեներալները և մեր հրամանատարները: Երևի նրանք իրանցը ստանում են և մերն էլ հետը կլանում: Կազակի ձեռքը հասնում է միայն 10 կօպէկ, որով նա պէտք է կերակրվի ամբողջ մի օր: Մեր ծառայութիւնը կատարեցինք ճշտութեամբ, այնուամենայնիւ այնտեղ հայհոյեցին և ծաղրեցին մեզ: Բայց և այնպէս մենք ամեն ինչ տարանք և համբերեցինք: Ինչու համար ենք այժմ մենք այստեղ տանջվում և չարչարվում և մեր գլխաւորները ոչ մի կարգադրութիւն չեն անում մեզ ազատ թողնելու՝ տուն վերադառնալու համար: Մենք կարծում էինք, թէ մեր մեծերը կը միջամտէին մեզ համար: Բայց ինչ հարկ կայ այդ անելու, քանի որ նրանք իրանց ընտանիքների հետ քաղցր կեանք են վարում և ոչ մի բանի կարիք չեն զգում:

Իսկ մեր ընտանիքները զգզված և չանգռտված են և ոչնչութեան է մատնվում նրանց վերջին ունեցածը... Կինը նամակ է գրում, կազակը կարդում է և արիւնով լցվում է նրա սիրտը, որ նրա դժբախտ ընտանիքը ենթարկվեց չքաւորութեան և թշուառութեան... Հայրերը և մայրերը ծերութեան հասակում մեզանից օգնութիւն են սպասում, որին չարժանանալով, սկսում են թափառել գիւղէ գիւղ՝ ողորմութիւն ուզելու համար: Ինչու համար է ներկայումս մեր ծառայութիւնը, քանի որ պատերազմը արդէն վերջացած է: Իսկ մեր գլխաւորները ստիպում են մեզ զանազան ձևով թռիչքներ գործել և ինչ որ բաներ սովորել: Իսկ մեր սիրտը... նա լցված է դառնութեամբ և ուզում է ճաքել:

Մեր գլխաւորները ստիպում են մեզ պաշտպանել ուրիշի կալուածը և հրամայում են ցրվել միախմբված բանւոր ժողովրդին, որոնք պահանջում են իրանց աշխատանքի վարձը՝ իրանց թշուառ վիճակը բարելաւելու համար: Ու մենք էլ լսեցինք մեր գլխաւորին, մտրակով ջարդեցինք նրանց և ոչ սակաւ ընտանիքներ թշուառութեան ու որբութեան մատնեցինք: Մենք կարծում էինք, թէ միայն վրացիներն են ապստամբվում. բայց բանից դուրս է գալիս, որ ամբողջ Ռուսաստանն է ապստամբվում. անշուշտ մի բան պակաս է նրան: Ստացանք մանիֆեստը, նրա հետ և հեռագիր, թէ պահեստի զօրքերը ազատ են, կարող են գնալ իրանց տները, բայց չը գիտենք, թէ ինչու չեն արձակում մեզ և ստիպում են ոստիկանական պաշտօն կատարել: Ինչու մենք պէտք է ոստիկանական պաշտօն կատարենք, քանի որ դրա համար յատուկ վարձված մարդիկ կան: Այդպիսով մենք կորցնում ենք և նսեմացնում մեր զինուորական կոչումը: Որքան և խուսափենք, բայց և այնպէս երևի ստիպված կը լինենք նոյնը անելու (ապստամբվելու), եթէ շուտով չեն արձակի մեզ՝ հայրենիք վերադառնալու համար:

Մանիֆեստում ասված էր, որ պէտք է բարելաւել զօրքի ապրուստը, բայց ոչ միայն բարելաւեցին, այլ և իսկական մեզ հասանելիքն էլ իրանց գրպանը դրին: Ամեն մի կազակի ձիու համար նշանակված է 11 փութ խոտ, իսկ մենք ստանում ենք 5—9 փութ միայն: Ո՞ւր է գնում և ում գրպանն է մտնում աւելացածը»: Ահա այս էր այն նամակի բովանդակութիւնը, որը քիչ մնաց խայտառակ չարիք հանդիսանար խեղճ «Черн. ВѢст.»-ի խմբագրութեան գլխին: Եւ դեռ ով գիտէ, արդեօք կարելի է բոլորովին հեռացած համարել այդ չարիքը:

Չը պէտք է մոռանալ ասելու, որ նախ քան այդ նամակի հրապարակ գալը, յիշեալ օֆիցէրները նախօրօք յայտնել էին «Черн. ВѢстНИКЪ»-ի խմբագրութեան, որ նա իրաւունք չունենայ ընդհանրապէս նրանց զօրքերի մասին որ և է բան տպելու իր թերթում, որին ոչ մի ուշադրութիւն չէ դարձնում խմբագրութիւնը:

Նոյեմբերի 19-ին

«Ч. ВѢс.»-ի այսօրվայ համարում (№ 177) տպված է մի օֆիցէրի նամակ կամ աւելի ճիշտ ասած մի կոչը իր ընկեր օֆիցէրներին ուղղած, որը վերջին աստիճանի հետաքրքիր է իր բովանդակութեամբ: Յօդուածագիրը իր ընկերների ուշադրութիւնն է գրավում դէպի 17-ի մանիֆեստի նշանակութիւնը և առաջարկում է միասին խորհրդակցել ու որոշել իրանց դերը և իսկական պարտականութիւնները ներկայ մեծ Ռուսաստանում տիրող ազատարար շարժման մէջ: Պէտք է որոշել, թէ ով ենք մենք և ինչ ենք մենք, ասում է նա. հաստատ մնալով երդման, մենք պէտք է հակառակ լինենք այն ամենին, ինչ որ հակառակ է Թագաւորին: Կոտորելով ժողովրդին, որը հազիւ է սկսել օգտվել ձեռք բերված ազատութիւնով, մենք դրանով հակառակ ենք գնում Թագաւորի կամքին, նրա ցանկութեան և այլն: Եւ ապա երկար փաստեր բերելուց յետոյ, յօդուածագիրը առաջարկում է իր ընկերներին արթնանալ վերջապէս և միանալ ժողովրդի հետ, այսինքն կարմիր դրօշակակիրների հետ և ոչ թէ Թագաւորի պատկերը գործիք շինած խուլիգանների հետ կոտորել ժողովրդին, որի համար իրանցից հաշիւ կը պահանջվի ապագայում և այլն: Նամակի վերջում հեղինակը առաջարկում է իր ընկերներին ձայնակցել իրան, իսկ խմբագրութիւնը իր կողմից ասում է, որ թերթի էջերը միշտ պատրաստ կը լինեն այդպիսի պատուաւոր կոչերի ձայնակցողների համար: Որքան և քիչ լինեն այդպիսի կոչերը, բայց և այնպէս անուրանալի է, որ վաղ թէ ուշ յաղթութիւնը պիտի լինի ժողովրդի կողմը, թէև շատ թանգ պիտի նստի նրան այդ յաղթութիւնը...

Նոյեմբերի 20-ին

Այսօր տեղիս սօց. դեմ. կազմակերպութիւնը միտինգ էր կազմել քաղաքից դուրս «բարակների մօտ» կոչված տեղը: Միտինգին զբաղեցնող գլխաւոր հարցերից մէկն էլ այն էր, թէ բաւարար կարելի՞ էր համարել այն, ինչ որ ասված է 17-ի մանիֆեստում, թէ ոչ, կամ գործադրվո՞ւմ են արդեօք ինչ որ նրա մէջ ասված է: Ճառախօսները երկար փաստերով ապացուցանելով թէ մանիֆեստից անմիջապէս յետոյ և թէ ներկայում շարունակվող զինուորական (պատերազմական) դրութիւնները երկրի մի քանի մասերում, որպէս են Լեհաստանում և այլն, հաստատում էին, որ 17-ի մանիֆեստը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի խաբուսիկ միջոց՝ ազատարար շարժումը քնացնելու համար: Կոմս Վիտտէն նմանում է մի կենդանու, որը ըստ պահանջին փոխում է իր տեսքը. նա երբեմն գայլ է երևում (Լեհաստանի վերաբերմամբ) իսկ երբեմն էլ աղուէս, բայց և այնպէս ամեն անգամ պոչը մնում է դուրս և ցոյց տալիս, թէ որքան անորոշ դրութեան և տատանման մէջ է նա,—ասում էին նրանք և առաջարկում, որ ժողովուրդը ամենայամառ կերպով դեռ պարտաւոր է շարունակել իր գործունէութիւնը, մինչև ձեռք կը բերվի իսկական ազատութիւնը բառի ամբողջ իմաստով և այլն:

Մի և նոյն միտինգում որոշվեց Բաթումի ամբողջ քաղաքացիների կողմից (միտինգին ներկայ էր մօտ 3—5 հազար հոգի) գոհունակութիւն յայտնել լեհ ժողովրդին՝ բռնութեան դէմ նրա մղած անվեհեր կռուի համար, իսկ կառավարութեան իր պարսավանքը՝ 17-ի մանիֆեստից յետոյ նրա բռնած ապօրինի ընթացքի համար: Այդ որոշումները հնար եղածի պէս կը յայտնվեն թէ լեհ ժողովրդին, և թէ կոմս Վիտտէին:

Այդ միտինգում որոշվեց և այն, «Ч. ВѢс.»-ի խմբագրութիւնը, որպէս սօց. դեմ. ուղղութեան յարած թերթ, իրաւունք չունենայ ամսիս 17-ին կօզակ-օֆիցէրների պահանջներին բաւարարութիւն տալու, այսինքն հրապարակով ներողութիւն խնդրելու, ինչպէս պահանջում էին նրանք «Вопль козака» յօդուածին տեղ տալու համար, հակառակ դէպքում նա ստիպված կը լինի բոլորովին փակվելու:

Միտինգից վերադառնալով քաղաք, նոր միայն լսեցինք, որ Գանձակում հայ-Թուրքական կոտորած է սկսվել: Նորից կոտորած... Որքան տխուր, նոյնքան զզվելի մի լուր, որքան ցաւալի, նոյնքան խայտառակ և ամօթաբեր մի լուր... Հայերից ոմանք յարմար էին տեսնում փակել բոլոր խանութները, հրաւիրել նաև տեղիս բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներին և միասին մի միտինգ կազմել՝ վճռական կերպով պահանջելու, որպէս քաղաքացիներ, թէ կառավարութիւնից և թէ Գանձակի երկու կողմի հասարակութիւններից, որ վերջ տան այդ խայտառակ գործողութեան, այդ ամօթաբեր վարմունքին, բայց հայ կազմակերպութիւնները անյարմար և աննպատակ գտան այդ՝ գլխաւորապէս նրա համար, որ իրանք հնարաւորութիւն, այսինքն ժամանակ չունէին գործին նախաձեռնող հանդիսանալու և լուրջ ընթացք տալու նրան.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՏԽՐԱՀՌՉԱԿ ԲՕԳՈՒՍԼԱՎՍԿԻՆ

(Նրա սպանման պատճառով բանտարկվածների գործի առիթով)

I

Նոյեմբերի 29-ին

Տխրահռչակ Բօգուսլավսկին ընկաւ վերջապէս:

Ցնծութեան այս լուրը թևերի վրա առած տարածեց ամենուրէք «Սուրմալուի աւետաբերը»: Այդ սրանից մօտ մի տարի առաջ էր: Ի՞նչ օր էր այն: Ուրախ էին ամենքը և ամեն տեղ: Բաժակներ էին դատարկվում ըմբոստ և խիզախ հոգիների կենացը: Եւ այս ընդհանուր ցնծութիւնը առանց նշանակալից պատճառի չէր: Բօգուսլավսկու անարգ մահով ազատվում էր ամուր կապանքներից ամբողջ մի ժողովուրդ:

Ազատ և լիքը շունչ քաշեց Սուրմալուի ազգաբնակութիւնն ընդհանրապէս և հայ ժողովուրդը մասնաւորապէս:

Բայց ով էր նա:—

Նա մարմնացեալ մի հրէշ էր. Գոլիցինեան շկօլայի հարազատ և հաւատարիմ աշակերտ: Մի խօսքով նա մի փոքրիկ Գոլիցին էր, իր ամբողջ զզուելի և նողկալի կողմերով:

Անարգանք նրան:

Նա ամբողջ իր գործունէութեան ընթացքում հաւատարիմ մնաց այդ շկօլային: Մտնելով իր պաշտօնավարութեան մէջ, գաւառապետը հէնց առաջին օրերից սկսում է հեռացնել հին պաշտօնեաներին, որոնք անհամեմատ մաքուր և բարեխիղճ անձնաւորութիւններ էին, և նրանց տեղը նշանակում սրիկայ և աւազակ մարդկանց: Շատ կարճ ժամանամիջոցում Սուրմալուի գաւառում կազմվում է ստոր և հայատեաց պաշտօնեաների մի ամբողջ բանակ, որի ոգին կազմում էր ինքը, Բօգուսլավսկին:

Սուրմալուի ամբողջ լեռնային գիծը յանձնում է յայտնի աւազակ քիւրդերին, Շամշադին եղբայրներին, երեքին նշանակելով գալաւ: Եթէ մինչև այդ նրանց աւազակութիւնը կատարվում է գաղտնի և խիստ նեղ սահմաններում, նրանից յետոյ դառնում է ակներև յայտնի և սանձարձակ: Ռուս-տաճկական սահմանը դառնում է յայտնի և յանդուգն աւազակների բոյն, իսկ Սուրմալու գաւառը բացարձակ կողոպուտի վայր: Ամեն անցած-դարձած քաշ յայտնի էր գաւառապետին: Բայց ամեն ինչ լռութեամբ էր ընդունում, շատ անգամ էլ խեղճ թալանվող գիւղացիներին սոսկալի ծեծով յետ վերցնել տալիս գրաւոր գանգատները և անարգանքով ճանապարհում: Եւ այստեղ զարմանալու ոչինչ չը կայ: Բօգուսլավսկին էլ մի աւազակ էր, միացած թալանողների հետ: Թալանի մի նշանաւոր բաժինը գաղտնի կերպով մտնում էր իր գրպանը:

Այս լեռնային գծի վրա. իսկ ցածը:

Ջրի հարց. դա ուղղակի «լինել-չլինել»-ու հարց է Սուրմալուի համար: Բօգուսլավսկու առաջին գործերից մէկը եղաւ նաև հին ջրպետի հեռացնելը: Մինչև այդ, ջրպետի պաշտօն էր վարում յայտնի Խալֆա-ղուլի բէգը, որը ճանաչված էր անաչառ և բարեխիղճ, միևնոյն ժամանակ հմուտ պաշտօնեայ: Բայց ինչու ցանկալի էր գաւառապետի համար սրա պաշտօնանկ լինելը: Շատ պարզ պատճառով: Որովհետև իր ասածով չէր շարժվում:

Եւ տապալվեց Խալֆա-ղուլի բէգը, իսկ նրա տեղը նշանակեց կամ ընտրել տուեց մի աննշան Թուրքի—Ալի Ռահիմ օղլի, իր «հաւատարիմներից» մէկին, որը յետոյ դարձաւ Ալի-բէգ: «Նշանակեց» կամ «ընտրել տուեց». այս խօսքերը անշուշտ քեզ, ընթերցող, կը զարմացնէ, բայց դրանց իմաստը աւելի քան նա պարզ է ամեն մի սուրմալեցու համար և զարմանալու ոչինչ չէ գտնի:

Ընտրութիւնից մի քանի օր առաջ խորհրդաւոր և սպառնալից փսփսուկը տարածվում էր ժողովրդի մէջ, զուժելով Սուրմալուի Աստուածու—այդպէս էր կոչում իրեն այդ անպատկառ և լրբացած պաշտօնեան—բարձրագոյն հրամանը: Իսկ ով էր այն յանդուգն, որ համարձակվէր դէմ լինել նրա ընտրելիին: Նա միայն հրաման արձակելով չէր բաւականանում: Նա իր խոժոռ և դիւային դէմքով ներկայ էր լինում նաև ընտրութեանը, տուփի մօտ նստած: Ահա ընտրված էք տեսնում նրա ուզած մարդը, շատ անգամ մինչև իսկ միաձայն: Ահա ինչ է նշանակում «ընտրել տալ» կամ «նշանակել»: Չը մոռանանք, խիստ կերպով է պահպանվում ժողովրդի իրաւունքի սկզբունքը, ինքը՝ ժողովուրդն է ընտրում:

Ի՞նչ զաւեշտ և զազրելի հեգնութիւն:

Այդպէս «նշանակել» է այն մարդուն ոչ թէ մի անգամ, չը նայած, որ ժողովրդի ամենաատելի անձն էր և ամբողջ էութեամբ բողոքում էին նրա դէմ: Եւ ահա շնորհիւ այդ հանգամանքի, Ջրային հարցը դարձաւ Դամոկլեան սուր՝ կախված սուրմալուեցիների գլխին, որով և բացվեց անխիղճ կողոպուտի և հարստահարութեան լայնարձակ ասպարէզը: Կաշառակերութիւնը ստանում է աւելի քան սոսկալի չափեր: Ժողովուրդը անտեսապէս կամաց-կամաց քայքայվում և հիւծվում է: Սուրմալուն այդ կողմից մեզ յիշեցնում է Սալմաստը: Սուրմալու և Սալմաստ. կաշառքջամայի կլասիկ երկրները:

Բօգուսլավսկին հռչակված էր իբր ոչ կաշառակեր: Այո, ըստ երևոյթին այդպէս էր: Նա ուղղակի կերպով ժողովրդից կաշառք չէր ստանում, բայց ստորին պաշտօնեաների բռնացած կաշառքի մեծագոյն բաժինը ծածուկ սողում էր «անկաշառ կաշառակերի» գրպանը: Ահա գաղտնիքը: Իսկ ստորին պաշտօնեաները սոսկալի կաշառակերներ են և ամենաստոր արարածները: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ քիչ-շատ յայտնի փչացած մարդիկ պաշտօնի կանչվեցին Բօգուսլավսկու ժամանակ: Ամբողջ պօլիցիան լցվեց Թուրքերով, ամենահասարակ պաշտօններն անգամ խլեց հայերի ձեռքից, յանձնեց Թուրքերին. իսկ որտեղ հնարաւոր չէր այդ, նշանակում էր ամենաստոր և փչացած հային: Օրինակները անթիւ են: Եւ եթէ սխալմամբ մի լաւ մարդ սպրդում էր այդ պաշտօնեաների մէջ, շատ կարճ ժամանակում նա էլ փչանում էր հոտած և նողկալի մթնոլորտի մէջ և գնում ընդհանուր հոսանքով, և կամ խոյս փախչում:

Այսպիսով ստեղծվեց ստորաքարշ և մարդակեր արարածների մի բանակ, մի խիտ ցանց՝ բռնած ամբողջ Սուրմալուն, իրանց գլուխը ունենալով տխրահռչակ Բօգուսլավսկուն, և որին յանձնված էր ամբողջ մի ժողովրդի բախտը:

Եւ ինչեր ասես չարեց այդ «սև բանակը»:

II

Բօգուսլավսկին ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում իր հակառակորդին ջախջախելու և տապալելու համար: Նա կատաղի էր մանաւանդ այն ժամանակ, երբ դիմացինը հայ էր: Ինքնուրոյնութիւն, ազատութիւն սիրող անձնաւորութիւնները նրա աչքի փուշն էին, և նա աշխատում էր այդպիսիներին ճնշել, սարկացնել և մեռցնել ամեն ինքնուրոյնութիւն: Նա չէր ուզում այդ հակազդողութիւնների գոյութիւնն անգամ ճանաչել:

Ժողովուրդը, մանաւանդ հայերը, պէտք է հլու հպատակ, ստրուկներ լինեն, միապաղաղ մի հօտ, իսկ ինքը նրան հրամայողը, տէրը: Ահա նրա համոզմունքը և տեսակէտը: Եւ նա դրանով էլ առաջնորդվում էր իր գործունէութեան ընթացքում:

Նա ամենակատաղի կերպով հալածում էր ամեն մի շարժում, որ իր հետ բերում էր նոր հոսանք, թարմ և ազատ մտքեր, որոնք նպաստում են ժողովրդի ինքնագիտակցութեան և ինքնուրոյնութեան: Յեղափոխականները, Բօգուսլավսկու տեսակէտով, ամենաստոր և փչացած մարդիկն էին: Նա թէև կատաղի կերպով հալածում էր նրանց, բայց նոյնքան էլ վախենում էր յեղափոխականներից, չը նայած արտաքուստ ցոյց էր տալիս որ արհամարհում է:

Նա հակառակ էր ամեն մի հանրօգուտ ձեռնարկութեան, և միշտ էլ խոչընդոտ էր յարուցանում և ոչնչացնում: Նրա ամբողջ գործունէութեան ընթացքում և ոչ մի բարեգործական նպատակով ձեռնարկութիւն չէ երևացել և քաջալերվել նրա կողմից: Նա չէր թոյլատրում սովորական, ժողովրդական ներկայացումներն անգամ:

Ասացի որ նա միջոցների մէջ խտրութիւն չէր դնում իր պայքարը առաջ տանելու գործում: Իսկ այդ խնդրում իրեն նշանաւոր ծառայութիւն են մատուցել «հասարակական որոշումները»:

Իսկ ինչ է այդ:

Կարողանում էք երևակայել, ընթերցող, եղբայրը ստորագրում է եղբօր աքսորման վճռի տակ, որդին հօրը, բարեկամը՝ բարեկամի: Դա արդէն չափազանց է և անհաւատալի, անշուշտ կը մտածէ ընթերցողը, բայց յամենայն դէպս իրական, կատարված փաստ է:

Իսկ ինչպէս է կատարվում այդ. ահա ամենապարզը: Նա հասարակական վճիռների ժամանակ իսկական բնագիրը (տեկստը) գրում էր այլ թղթի վրա, իսկ ստորագրել էր տալիս ժողովրդին մի այլ թղթի վրա: Սկզբում տեկստի վրա այնպիսի խնդիրների մասին էր գրել տալիս, որ ժողովուրդը հեշտութեամբ, նոյնիսկ ուրախութեամբ կը ստորագրէր: Իսկ յետոյ գաւառապետը իր հայեցողութեան համեմատ կազմում նոր տեկստ և միացնում նրան ժողովրդի ստորագրութիւնը: Եւ այդ է ահա, որ դառնում է ժողովրդի որոշում, հասարակական վճիռ (мірскій приговоръ):

Այդպիսի կեղծ հասարակական վճռի արդիւնք էր երեք հայերի և մի Թուրքի աքսորումը: Այդ վճռին, կրկնում եմ, ստորագրել էին նրանց ամենամօտիկ բարեկամներն անգամ:

Մի այլ անգամ էլ, էլի շնորհիւ կեղծ որոշման, իգդիրցիք յանկարծ տեսնում են, որ հասարակական նշանաւոր գումար—կշռի և մսավաճառութեան հարկը—յատկացրել էր ռուսաց դպրոցին: Այժմ, ներկայ գաւառապետի օրով, պարզվում է, որ հասարակական վճռով յատկացվել է միայն 1000 ր. այն ինչ արդիւնքն է եղել տարեկան մօտ 1700 ր. իսկ ուր է գնացել այդ 700 ր. յայտնի չէ:

Վերաբացվելով Իգդիրի հայոց դպրոցը, միաժամանակ իգդիրցիք արծարծեցին այդ գումարի հարցը և բողոքում են այդ կեղծ և անարդար որոշման դէմ:

Ահա ինչպիսի ստոր միջոցներով էր նա կռվում իր հակառակորդների դէմ և առաջ տանում իր խարդաւանքները: Եւ նա իր այդպիսի հրէշաւոր արարքներով և կեղծութիւններով ոչ միայն եղկելի դարձաւ ինքը, այլ, որ և գլխաւորն է, զզվելի դարձրեց նաև պետական օրէնքները և ժողովուրդը ատելութեամբ ու թոյնով լցվեց կառավարութեան դէմ:

Անթիւ բողոքներ, մէկը միւսից զօրաւոր և փաստալից, բայց Բօգուսլավսկու դէմ և նահանգապետի համար միանգամայն անզօր և դատարկ, սկսեցին տեղալ Երևան: Եւ ծեծված, հարստահարված ժողովրդի, արդար ժողովրդի արդար բողոքի ձայնը հնչեց դատարկութեան մէջ... և լռեց: Ո՞վ էր լսողը: Նոյնքան տխրահռչակ Ֆրեյզէն: Դա արդէն միամտութիւն կը լինէր:

Բայց նա մի անգամ եկաւ. գալիս էր նա ժողովրդի ցաւը ամոքելու: Գոնէ ըստ երևոյթին այդպէս էր ցոյց տալիս:

Եւ եկաւ նա:

Միամիտ և դիւրահաւատ ժողովուրդը ցնծութեան մէջ էր և հրճվում էր, ինչպէս մանուկ:

Իսկ այնտեղ, «Սուրմալուի Աստուծու» պալատում հիւսվում էր ինտրիգներից ամենասոսկալին, ոճիրներից ամենազազրելին:

Եւ մի տխուր առաւօտ իգդիրցիք արթնացան խորունկ ցաւով և կսկիծով:

Ռուսաց նորակառոյց եկեղեցու հիմքը քանդել էին, ի հարկէ հրէշ գաւառապետի թելադրութեամբ, և յանկարծ ձերբակալվում են չորս մարտնչող երիտասարդներ, որոնց երկուսը բանտի մէջ մեռան:

Այդ էր միայն հարկաւոր դիւային ինտրիգների տաղանդաւոր հեղինակին: Եւ նա քրքջաց:

Այժմ թող գայ Ֆրեյզէն: Եւ նա եկաւ:

Միամիտ ժողովուրդը սրտատրոփ սպասում և երազում էր գալիք քաղցր օրերի մասին:

Խեղճ ժողովուրդ...

Դուրս եկաւ Ֆրեյզէն, Բօգուսլավսկու կնոջ հետ թևանցուկ, և գնաց նա լսելու ժողովրդի բողոքը:

Խռնվել էր հոծ բազմութիւն: Բազմազան և խորունկ ցաւերի և կսկիծների մի ովկիան էր այն:

Խոժոռ և դիւային նայվածքով ընդունեց ու լսեց ժողովրդի գանգատը: Այո, միայն լսեց: Յանկարծ նա որոտաց, գոռաց, հայհոյեց, ժողովրդին հռչակեց հակառակ պետական շահերին—թարմ փաստի վրա շեշտելով—խիստ կերպով սպառնաց, մատը հանդիսաւոր և սպառնալից ճօճեց օդի մէջ և... գնաց:

Յետևից գնաց և Բօգուսլավսկին քրքջալով: Քրքիջ, որ ամբողջապէս թոյն էր և հեգնանք:

Միամիտ ժողովուրդը մի րոպէ ապշած մնաց և ապա շշմած գնաց, գլուխները օրօրելով և յուսաբեկ, գնաց նոր միջոց որոնելու, որոնելու իր մէջ:

(Կը շարունակվի)

ուստի և անուշադիր մնաց այդ առաջարկութիւնը:

21—26 նոյեմբերի

Ամբողջ շաբաթը մեզ զբաղեցնող և միակ ուշադրաւ հարցը Գանձակի կոտորածն է, որին հետևեց և Թիֆլիսը: Անցեալ շաբաթվանից, այսինքն պօստ-հեռագրական հաղորդակցութեան դադարումից յետոյ, միայն 3 համար է ստացվել «Մշակ» լրագրի և մի նոյնքան էլ միւս թերթերից: Միակ թերթը, որ յաճախ երևում է այստեղ, դա վրաց «Իվերիան» է: Զարմանալի բան, աշխարհս փոխվեց և «Իվերիան» չը փոխվեց: Մեռած «Իվերիան» յարութիւն առաւ, որպէս թէ նոր «իդէալով», նոր և ամենալայն, համամարդկային ուղղութեամբ, բայց բոլորը սուտ և բոլորը աչքակապութեամբ: Ամեն մի համար ձեռք առնելուն պէս, մարդ իսկոյն զգում է, որ գործ ունի այնպիսի մի թերթի հետ, որը ընդունակ է ամեն բան անելու—և՛ ստելու, և՛ խաբելու, և՛ թշնամացնելու, իսկ ինքը որպէս անմեղ հրեշտակ և որպէս «լայն գաղափարի հետևող», իրան «բարձր» պահելու: Այդպիսիների տիպը շատ պարզ որոշում է վրացիական մի առած «ակլօրը նստել է աղբի վրա և պոչը բարձր է պահում»:

Եւ իրաւ, դժուար է առանց վրդովմունքի կարդալ այդ թերթի ամեն մի համարը. ամեն ինչ կայ նրանց մէջ, միայն պատկառանք և խղճմտանք չը կայ: Վերցնենք օրինակ № 213 կիսաթերթը. սկսում էք կարդալ երկար յօդվածները Թիֆլիսում հայ-թուրքական կոտորածի մասին, սկզբից ձեզ թւում է, թէ ամենաքիչը մի 500—1000 թուրք են սպանել հայերը և իրանցից 5 մարդու քիթ չէ արիւնոտվել, բայց երբ համնում էք սպանվածների ցուցակին, յանկարծ տեսնում էք հետևեալը. նոյեմբեր 22—25-ը Միքայէլեան հիւանդանոց են բերվել սպանված 10 թուրք և 6 հայ, նոյն հիւանդանոցում (մինչև 26 ն.) ծանր կերպով վիրաւորվածներ կան 14 թուրք և 11 հայ: Եւ այդ աննշան տարբերութեան համար որպիսի մեղադրանքներ է թափում միայն հայերի գլխին, որ նրանք ուզում են «ամեն ինչ իրանցը լինի և ուրիշներին—ոչինչ»: Ո՛րպիսի ելևէջներ և որպիսի սրտաճմլիկ բառեր է գործածում թուրք սպանվածներին նկարագրելու համար. «մի տեղ 5 սպանված թուրք տեսայ,—ասում է յօդուածագիրը,—նրանցից մէկի մօտ թափված էին չայի ամանները և քիչ հեռու էլ մի պօրտմօնէ: Այդ թուրքերից քիչ հեռու մի հայ աղջիկ էին սպանել, նրա դիակը հարևաններից մէկը ներս էր տարել իր հայաթը, իսկ խեղճ թուրքերը մնացել էին փողոցում անտէր կերպով թափված» և այլն: Կարծեմ այսքանն էլ բաւական է, թէ որքան անբարեխիղճ կերպով է բացատրում նա հայ-թուրքական ընդհարումները և իր ընթերցողներին յարում դէպի հայ տարրը: Մենք, ի հարկէ, լաւ ճանաչելով «Իվերիային», ամենևին չենք զարմանում նրա վարմունքի վրա, մեզ վրդովում է միայն մի հանգամանք, որ այդ թերթը մի կողմից դիմակաւորվում է որպէս ամենալայն գաղափարների հետևող, իսկ միւս կողմից աւելի խաւարամիտ հրէշ է ներկայանում երկու հարևան ազգերի մէջ, քան թէ էր առաջ: Այդ բոլորից յետոյ ի հարկէ զարմանալի չէ, որ փոխանակ պաշտպաններ տալու, զանազան Նակաշիձէներ և Ծակայշվիլիներ է ծնում մեզ համար վրաց ազգը...

—

Վաղը, ամսիս 27-ին, տեղիս սօց. դեմօկրատիական կազմակերպութիւնը միտինգ է նշանակել քաղաքից դուրս բաղնիքների մօտ, որի հերթական հարցերից առաջինը վերաբերում է հայ-թուրքական կոտորածներին Գանձակում: Որովհետև այդ կազմակերպութեան անդամների մեծ մասը վրացիք են, դրա համար էլ չեմ կարծում թէ անաչառ կերպով դատվի այդ հարցը և «Իվերիայի» հետ չը փչի նրա լուծման խնդրում: Առհասարակ այսպիսի մի հասկացողութիւն է տիրում մեր հարևան վրացիների մէջ հայերի վերաբերմամբ. հայ—նշանակում է բուրժուա, բուրժուա—նշանակում է հայ. և որովհետև բուրժուան ատելի է, դրա համար էլ ամբողջ հայերը ատելի են նրանց աչքում: Ինչ և իցէ. վաղվանից կը սկսեմ նոր օրագիր կազմել խմբագրութեան ուղարկելու համար:

Գ. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դեկտ. 4-ին մեզ հեռագրում են Բաթումից. «Երեկոյեան 5 ժամին № 5 գնացքի I կարգի վագօնում անյայտ անձեր սպանել են Բաթումի դէպօի գլխաւոր Օրօլենսկուն»:

—

Վերջին օրերս Ցարսկոէ-Սելօում տեղի ունեցին մի քանի ազդեցիկ անձանց խորհրդակցութիւններ գործերի ժամանակակից դրութեան մասին երկրում: Ինչպէս երևում է, հէնց վերջին խորհրդակցութեան հետևանք էր Խրուստալէվի կալանաւորումը: Խորհրդակցութեան մասնակցողները այն եզրակացութեան եկան, որ ներկայ վայրկեանում այդ քայլը կատարելապէս հնարաւոր է այն պատճառով, որ, նրանց կարծիքով, վերջին օրերս հասարակական կարծիքը, յոգնած անկարգութիւնից և անիշխանութիւնից, աչքի ընկնող քայլ արեց դէպի կառավարութեան կողմը: Ի նկատի ունենալով այդ, որոշված է ամեն միջոցներ ձեռք առնել կարգ հաստատելու համար մինչև Պետերբուրգում զինուորական դրութիւն յայտարարելը, եթէ դա կը հարկաւորվի: Այդ նոյն նիստում հարց յարուցվեց կոմս Վիտտէի մասին: Մասնակցողների մեծամասնութիւնը այն միտքը յայտնեց, որ կոմսը չարդարացրեց նրա վրա դրված յոյսերը և ոչ միայն չը խաղաղացրեց հասարակութիւնը, այլ ընդհակառակն, աւելի ևս շփոթ մտցրեց: Սակայն, դէպի յետադիմութիւն անցնելը անպայման անհնարելի համարվեց, և այդ պատճառով, երբ քննվեց կոմս Վիտտէի տեղ թեկնածուի հարցը, մեծամասնութիւնը մատնացոյց արեց իշխան Սվեատոպոլկ-Միրսկու վրա: Վերջինին կանչում են Պետերբուրգ:

—

Նոյեմբերի 30-ին, Վարշավայի երկաթուղով Բեռլին ուղարկվեց 7 միլիօն ոսկով վերջին պատերազմական փոխառութիւնների տոկոսները վճարելու համար: Երբ գնացքն արդէն հեռացաւ կայարանից, տեղեկութիւն ստացվեց, որ Վարշավայի երկաթուղու երկաթուղական ծառայողները դիտաւորութիւն ունեն ճանապարհին յափշտակել այդ ոսկին և այդ պատճառով որոշվեց նստեցնել այդ վագօնում երկու վաշտ զինուորներ:

—

Երկուշաբթի, դեկտեմբերի 4-ին՝ շնորհիւ քաղաքիս մէջ տիրող հանգստութեանը, մի քանի երկսեռ ուսումնարաններում ուսումը վերսկսվեց, թէպէտ յաճախող աշակերտների և աշակերտուհիների թիւը անհասկանալի պատճառով համեմատաբար քիչ էր: Երկար գործադուլ՝ ուսումը վերսկսելու նկատմամբ է Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտի և նրան կից քաղաքային դպրոցի աշակերտների մէջ, որոնք՝ որպէս նորագոյն ժամանակի երևոյթ՝ լրագիրներ և շաբաթաթերթեր հրատարակելու տենչով են աւելի ոգևորված և որոնց մէջ դպրոցական խնդիրների քննութիւնները գլխաւոր տեղն են բռնում: Ինչ վերաբերում է քաղաքիս գիշերօթիկ ուսումնարաններին (օրիորդաց ինստիտուտ, Նունէի օր. ուսումնարան և այլն) ուսումը անխափան շարունակվում է գիշերօթիկների համար:

—

Քաղաքիս մի քանի հրապարակներում, ինչպէս, օրինակ, Ալճալեան հրապարակում, գերմանացոց գերեզմանատան մօտ, Նիկոլաևսկի հրապարակում—9-րդ քաղաքամասում և այլն քաղաքային կշեռները վերացված են և այդ հրապարակները այլ ևս գիւղացիների բերած բերքերի (գետնախնձոր, կաղամբ և այլն) համար կայարաններ չեն ծառայում, ուստի հրապարակին մօտիկ թաղերի բնակիչները ստիպված են իրանց ձմեռվայ հարկաւոր մթերքները կամ հեռու տեղերից գնել, կամ մօտիկ խանութներից՝ երկու դէպքում և 25—30% աւել վճարելով: Բացի այդ, բնակիչների մշակները ևս իրանց համար սակագին են նշանակել՝ պուդին 5 կօպ. տանելու համար, լինի այդ թէկուզ երկու քայլ հեռաւորութեամբ: Այսպիսով ամեն կողմից խեղճը ունևորի հետ ճնշված է, իսկ թէ ո՞ր աղբիւրներից պէտք է նա բաւականութիւն տայ այդքան նոր պահանջներին և հարկերին—հարցնող չը կայ, ամենը իր էշն է առաջ քշում...

—

Քաղաքիս I մասի պրիստաւ Բաչուրինը նշանակվում է... Գանձակի ոստիկանապետ: Զարմանալի է այս չարաբաստիկ պրիստաւի ճակատագիրը: Սկզբում սա վարում էր պրիստաւի պաշտօն քաղաքիս 4-րդ մասում (Սօլօլակ). իր վայրենի և անպատկառ վարմունքի համար քաղաքագլուխ պ. Եւանգուլօվի հետ, քաղաքային խորհրդի վճռի համաձայն՝ նահանգապետից ամսու արձակվեցաւ իր պաշտօնից, բայց մնալով քաղաքում՝ պալատական պահակի մէջ էր հաշւում (дворцовая охрана): Այնուհետև նրան ուզում էին փոխադրել Հաւլաբար 7-րդ քաղաքամասի պրիստաւի պաշտօնով, բայց նրա բնոյթի հետ վաղուց ծանօթ էին Հաւլաբարի բնակիչները, ուստի և հաւաքական բողոքով չընդունեցին նրան. այնուհետև փոխադրում էին նրան քաղաքիս 6-րդ մասի պրիստաւ, այստեղ էլ բնակիչները նոյն դժգոհութիւնը և բողոքը արտայայտեցին, վերջը սա նշանակվում է Վերայի I քաղաքամասի պրիստաւ և ահա մի երկու ամսից յետոյ այստեղից էլ տեղափոխվում է Գանձակ, այն էլ ոստիկանապետի (?) պաշտօնով: Նոյն վիճակի ենթարկվել է քաղաքիս 9-րդ թաղի մի ջահել և անփորձ թաղական ոստիկան (օկօլօդոչնի) Մօնաստիրսկին. սա էլ անցեալ տարի արձակվեց իր պաշտօնից, յետոյ գիմնազիստներին ծեծելու և անպատւելու պատճառով՝ քրէական դատի ենթարկվեց և դատապարտվեց բանտարկութեան 3 շաբաթ ժամանակով և մի՛ն՝ երկու անգամ և ահա սրան Բագուի, Բալախանի բաժնի ոստիկանապետ նշանակեցին...

—

Քաղաքիս էլեքտրաքարշի վագօնները վերջին ժամանակները վերին աստիճանի դանդաղ և անկանոն են շարժվում: Մի կողմից վագօնների սահմանափակ թիւը, միւս կողմից էլեքտրաքարշի գծի և էլեքտրական լարերի շուտ-շուտ փչանալը և երրորդ կողմից՝ մի քանի վատմանների անփոյթ և անճիշտ ընթացքը պաշտօնավարութեան ժամանակ՝ միանգամայն արգելք են դառնում գնացքների կանոնաւոր շրջագայութեան՝ տրտունջների և անբաւականութիւնների տեղիք տալով մանաւանդ այն ճամբորդների կողմից, որոնք մշտական երթևեկութիւն ունեն էլեքտրաքարշով: Առանձնապէս գնացքների դանդաղութիւնը զգալի է բնակիչների համար իշխ. Վօրոնցովի արձանի մօտ, որը էլեքտրաքարշի գլխաւոր կայարանն է և որտեղ խմբվում է ամեն րոպէ մեծ բազմութիւն քաղաքիս 5, 6, 7, 8, 9, և 10-րդ քաղաքամասերից՝ սպասելով մի կողմից՝ Միքայէլեան պրօսպէկտից եկող վագօններին, միւս կողմից՝ Սաղը և Օրթաճալա, ինչպէս նաև Միքայէլեան պրօսպէկտով՝ Մուշթայիդ և կայարան (վօկզալ) գնացող վագօններին: Ահա այդ նշանաւոր կէտում՝ ժողովուրդը ստիպված է յաճախ 5 րոպէի տեղ 20—25—30 րոպէ սպասել բացօթեայ՝ ամեն եղանակին՝ վագօնների (մանաւանդ Միքայէլեան պրօսպէկտից) գալուն: Իսկ այդ անկանոն ընթացքը ամեն օր տրտունջների և արդարացի բողոքների պատճառ է դառնում, մանաւանդ ուսանողների կողմից, որոնց րոպէները դասին հասնելու—միանգամայն չափած և հաշված են և որոնք րոպէների հաշւով են կատարում իրանց երթևեկութիւնը: Միթէ էլեքտրաքարշի վարչութիւնը անկարող է դիւրացնել բնակիչների համար երթևեկութիւնը և վերացնել յիշեալ արգելքները, որոնք ամեն օր անվերջ բողոքների և տրտունջների առիթ են ներկայացնում: Վերջապէս ո՞ւր է քաղաքային յատուկ վերահսկիչ մասնաժողովի վերատեսչութիւնը այդ գործում:

—

Կովկասեան մանկավարժների «դաշնակցութիւնը» վերջացնելով դեկտեմբերի 3-ին կանոնադրութեան նախագծի քննութիւնը և տպագրել տալով նրան փոփոխած և սրբագրված, այս օրերս բիւրօի միջոցով ուղարկելու է Կովկասի բոլոր ուսումնարաններին և ժողովրդական լուսաւորութեան գործով պարապողներին, որոնք իրանց կողմից քննութեան տակ առնելով իրանց կորպօրացիաներում—վերապահելու են իրանց կարծիքները և յայտնելու են ամեն կորպօրացիաներից և ուսուցչական խմբերից ընտրած յատուկ պատւիրակների բերանով պատւիրակների ընդհանուր ժողովում: Կովկասի ուսումնական շրջանի պատւիրակների (դելեգատ) ընդհանուր ժողով որոշված է նշանակել առաջիկայ Ծննդեան տօներին, եթէ միայն արտաքին անակնկալ կամ պատահական արգելքներ չը հանդիպեն: Պատւիրակների այդ ընդհանուր ժողովը, բացի վերջնականապէս «կանոնադրութիւնը» մշակելուց և սրբագրելուց՝ կը զբաղվի և վարչական մի քանի մարմինների ընտրութեամբ «Կովկասեան մանկավարժական դաշնակցութեան» կենդրոնական և ճիւղաբաժինների համար, որպէս զի շտապեցնէ իր միութեան կապը «Համառուսական մանկավարժների դաշնակցութեան» հետ, որի կենդրոնական բիւրօն արդէն՝ գործին արագ ընթացք տալու համար՝ դիմումներ է արել Թիֆլիսի բիւրօին, օր առաջ միանալու իր հետ:

—

Թիֆլիսի I արական գիմնազիայում երրորդ դասարանը բացվելուց յետոյ՝ այս շաբաթ բացվում է չորրորդ դասարան, որի շինութեան նորոգութիւնը նոյեմբերի 22-ի արիւնահեղ անցքերից յետոյ՝ աւարտած է: Ի դէպ՝ հարկաւոր ենք համարում հաղորդել՝ որ «Իվերիա» լրագրի համարներից մէկի մէջ հաղորդած լուրը, որ իբր յիշեալ գիմնազիայի վերատեսուչ պ. Իվ. Գամկրելիձէն, որը բաւականին մեծ համակրութիւն է վայելում հասարակութեան խաւերում, հրաժարական է ներկայացրել՝ միանգամայն անհիմն է:

—

«Մշակ»-ի անցեալ համարներից մէկում մի ականատես, Գեօրգիևսկի հրապարակում բնակարան ունեցող մի պարոն (անունն էլ յիշված է «Մշակում») վրդովված հերքել է Բ.-ի հաղորդած լուրը, թէ դաշնակցական «զինուոր»-ներն են կողոպտել կամ մասնակցել Ալիևի պահեստի կողոպուտին: Յիշված պարոնը տեսել էր իր աչքով, որ կողոպտողները եղել են հայ և վրացի սրիկաներ. նա սաստիկ վրդովված էր, որ «К. Р. Лист.»-ին այդ Բ. կամ լրատու «անբարեխիղճ» լուր է հաղորդել և դրանով մոլորեցրել է թերթի խմբագրութեան: Այժմ Բ. պարոնը, փրփուրը բերանին, կատաղած հայհոյում է «Մշակ»-ին, և «փողոցային հայհոյանք» անուանում այն, որ լրատու պարոնը նրան անուանել է «անբարեխիղճ» և «անձնական ողորմելի հաշիւներ» մաքրող... Զարմանում ենք, թէ ինչու Բ. կատաղել, փրփրել է. տրված է մեր լրատուի անունը, յիշված է նրա տանտէրը—եթէ մի կաթիլ խիղճ ու ճշմարտասիրութիւն ունէք, պ. Բ., գնացէք նրա մօտ, ստուգեցէք ձեր գրածը. էլ ինչ գործ ունի այստեղ «Մշակ»-ը, ո՞ւր են «փողոցային հայհոյանքները»... Նախ պէտք է հասկանալ և ապա հայհոյել կամ գովել:

—

«Пет. Газета» լրագիրը հաղորդում է, որ մինիստրների մասնաւոր խորհրդակցութիւնը կոմս Վիտտէի մօտ դաշնակցութեան որոշման առիթով մամուլի պաշտպանութեան համար, որը հրաժարվեց ենթարկվել այն սահմանափակումներին, որոնք արված են մամուլի վերաբերեալ ժամանակաւոր կանոնների մէջ, ձայների մեծամասնութեամբ կտրական կերպով այն միտքը յայտնեց, թէ պէտք է նոր օրէնքը իր լիակատար ծաւալով և խստութեամբ գործադրել բոլոր պարբերական հրատարակութիւնների վերաբերմամբ, չը նայելով որ և է երկրորդական խորհրդածութիւնից:

—

Թիֆլիսի բէշալեան դպրոցի աշակերտները վճռել են շարունակել գործադուլը, որովհետև դպրոցի տեսուչը յայտարարել է, որ նրանք համարվում են դպրոցից արձակված:

—

Թիֆլիսի II քաղաքամասի ինքնապաշտպանութեան պահակը դեկտեմբերի 3-ի գիշերը ձերբակալել էր մի խուլիգանի՝ օֆիցէրի զգեստ հագած: Երևաց որ դա մի հարբեցող խոհարար է, պաշտօնից վռնդված: Պահակը՝ քննութիւն անելուց յետոյ, խուլիգանին տարաւ կոմենդանտի վարչութիւնը: Պարզվեց, որ օֆիցէրական զգեստը պատկանում է պաշտօնաթող կապիտան Բօրզենկօին, որը և իսկոյն եկաւ պահակի անդամների մօտ ու պահանջեց իր «պատւաւոր» համազգեստը, առարկելով, որ ինքը տուել է այդ խուլիգանին միայն 2 ժամով:—Երևի այդ կապիտանին 3 օր միայն կը բանտարկեն...

—

Կովկասի ոստիկանական մասի գլխաւոր դիւանատունը, ասում են, կազմում է Բագուի համար ոստիկանական նոր կազմ: Այդ նոր ոստիկանութիւնը միայն քաղաքի համար չէ, այլ և ամբողջ նաւթաշրջանի համար:

—

Բաթումից լուր է ստացվել, որ այնտեղ տրամադրութիւնը դեռ ևս խիստ յուզված է: Տեղի է ունեցել զինուորների միտինգ, որի ժամանակ ճառ խօսողներից 2-ին, երկուսն էլ ականաւոր զինուորական վաշտից,—խիստ ծեծ են կերել, իսկ 3 հոգի քաղաքացիներից սպանվել են:

—

Թիֆլիսի Ֆրէյլինեան փողոցում գտնվում են Պետական բանկը, նրա խնայողական արկղը և Փիթոյեանի մասնաւոր բանկային գրասենեակը: Ահա 4 օր է, որ այդ փողոցով անցնելու տեղ չը կայ: Քաղաքացիները լցվել են և յետ են պահանջում իրանց խնայած ու պահ տուած գումարները: Սարսափն ընդհանուր է: Ակամայ յիշում ես Ջօն-Լօուին և իր վարկաթղթերը...

—

Փօթիից հեռագրում են Անդրկովկասեան երկաթուղիների վարչութեանը, որ դեկտեմբերի 1-ին կայացաւ այնտեղի երկաթուղիական բոլոր պաշտօնեաների ընդհանուր ժողով, որը որոշել է հետևեալը. աչքի առաջ ունենալով կազակների վերջին յարձակումը խաղաղ բնակիչների վրա, ժողովը խնդրում է 50 հրացան և դրանց համար փամփուշտ՝ ինքնապաշտպանութեան համար պաշտօնեաներից միլիցիա կազմելու:

—

«Ցնօբիս-Փուրցելի» լրագրին հաղորդում են, որ Զակվա աւանում կազմվել է միտինգ մահմեդական-վրացիներից: Ներկայ են եղել 1,500-ի չափ մարդ, գլխաւորապէս ներկայացուցիչներ Աջարիայի և Բաթումի շրջանի գիւղերից: Խօսել են ճառեր սօց.-ֆէդերալիստ և սօց.-դեմօկրատ կուսակցութեան ներկայացուցիչներ: Կայացրել են հետևեալ որոշումները. 1) ընտրել ներկայացուցիչներ բոլոր գիւղերից և 2) գործել սօցիալիստ-ֆէդերալիստների կուսակցութեան ղեկավարութեան տակ և նրանց ծրագրով:

—

«Кавказъ» լրագրի խմբագիր է նշանակված Թիֆլիսում ամենքին յայտնի երդուեալ հաւատարմատար Պ. Ա. Օպօչինինը: Նոր խմբագրութեամբ լրագիրը կը սկսէ հրատարակվել առաջիկայ 1906 թւի յունվարի 1-ից:

—

Դեկտեմբերի 4-ին Թիֆլիսի գերմանական, անգլիական և շվէդական գաղութների անդամներն իրանց հիւպատոսների մասնակցութեամբ մի ընդհանուր ժողով կազմեցին Վեցէլի հիւրանոցի մեծ դահլիճում: Մշակվեց և ընդունվեց ազատարար թռուցիկ խմբի համար կանոններ: Այդ խումբը հրդեհների և կոտորածների ու կողոպուտների ժամանակ պէտք է փոխադարձ օգնութիւն հասցնէ՝ փրկելու մարդկանց և նրանց գոյքերը: Խումբը կազմված է լինելու ներգործական և օժանդակ անդամներից: Նա քաղաքականապէս լինելու է չէզոք և գործելու է «Գերմանական ինքնապաշտպանութեան խումբ» անուան տակ:

—

Բաթումը հրատարակված է պաշարման վիճակում, այդ պատճառով զինուորական պահակները ոչ ոքի չեն թողնում փողոց դուրս գալու երեկոյեան ժամը 6-ից յետոյ: Դրան հետևեց այն, որ դեկտ. 3-ից սկսած՝ գիշերներն այլ ևս գնացքները չեն բանում Բաթումից Թիֆլիս:

—

Թիֆլիսի «Պուր-Ղվինօ» ճաշարանի տէր պ. Մամինաշվիլին խնդիր էր ներկայացրել Կովկասի փոխարքային և պահանջում էր այն վնասները, որ պատճառել էին իրան զօրքերը, «հայրենասէրները» և խուլիգանները նոյեմբերի 22-ի արիւնալի դէպքի օրը: Մարգարէ չը պէտք էր լինել գուշակելու համար, որ նրան կմերժէին բաւարարութիւն տալ: Եւ այդպէս էլ եղաւ. փոխարքայի դիւանը մերժել է նրա խնդիրը:

—

Թիֆլիսի X քաղաքամասի ոստիկանական պաշտօնեաների մէջ նկատվում է մի ուրախալի շարժում: Նրանք հաստատել են ընկերական դատարան: Անցեալ օրն այդ դատարանին ենթարկվեց գօրօդօվօյ Կարպօվը, որը մեղադրվում էր պրօվօկացիայով զբաղվելու մէջ: Նրա յանցանքն ապացուցվեց փաստերով և ընկերական դատարանը վճռեց անյապաղ հեռացնել նրան պաշտօնից: X քաղաքամասի պրիստաւը նրան հեռացրել է արդէն:

—

Բելօվիդօվ անունով քահանան նշանակված է Կարսի ռուսական տաճարի աւագ-քահանայ: Յիշված քահանան Թիֆլիսի II արական գիմնազիայում և թեմական դպրոցում կրօնուսույց էր, բայց նրան հեռացրել են այդ պաշտօնից իր «հայրենասիրական» յայտնի գործունէութեան համար:—Սա ինչ դժոխային ծրագիր է, ինչ անիծեալ «կախարդված շրջան» է. Եացկէվիչի ձեռներն արիւնոտվում են Թիֆլիսում օգոստոսի 29-ին՝ նրան ուղարկում են Երևան գնդ. նահանգապետ, հեռացնելով արդարասէր և անկաշառ եւրոպացուն—պրինց Նապօլէօնին. Թիֆլիսի նախկին ոստիկանապետ Կովալեօվը ճարպկութեամբ կազմակերպում է «պատրիօտներին»—նրան իսկոյն ուղարկում են Երևանի փոխ-նահանգապետ. Թիֆլիսի պրիստաւ Բաչուրինը պրօվօկատօրական խայտառակ վարմունքի համար պաշտօնից արձակվում է և դատի ենթարկվում—նրան իսկոյն ուղարկում են Գանձակ ոստիկանապետ. Բելօվիդօվ քահանան գիմնազիայից արձակվում է իր «հայրենասիրական» քաջագործութեան համար—նրան ուղարկում են Կարս... Սա ինչ է, ինչ անէծք է, ինչ խայտառակ պրակտիկա... Դեռ աւելին ասենք. Ֆլէշէրի նման մաքուր և բարեկամ մարդը յանկարծ մեղմանում է դէպի թուրքերը, «ֆրօնտը փոխում»... Ծակայշվիլին երգւում է, որ իրան վերևից հրամաններ են տուել մեղմ վարվելու թուրքերի հետ... Ինչով բացատրել այդ բոլոր պրօվօկատօրական քայլերը: Ի՞նչ է արել հայ ժողովուրդը, ինչ մեղք են գործել հայկական գաւառները, որ բոլոր արտաքսվածներին, բոլոր հայակերներին քշում են մեր—հայերիս գլխին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԻՑ

Եթէ մեր ընթերցողները յիշում են, մենք թարգմանաբար առաջ բերինք «La Revue»-ից Եգիպտոսի թուրք յայտնի խմբագիրներից մէկի, Մուստաֆա Քեամիլ փաշայի մի յօդուածը, ուր յօդուածագիր փաշան իր անզուսպ հիացմունքն էր փռում Աբդուլ-Համիդի անձի համար, մի տխուր հպարտութեամբ հաստատում էր, որ խալիֆայութեան տիրողը կրելու արժանի միակ արարածը՝ 300,000 հայերի և բիւրաւոր ազնիւ թուրքերի արեան մէջ լողացող Կարմիր Սուլթանն է, որ ամեն ճշմարիտ մահմեդական իր սրբազան պարտականութիւնը պիտի համարէ նուիրվել նրա կոյր պաշտամունքին, որ արաբները ապստամբվելով նրա իշխանութեան դէմ, պարզապէս դաւաճանում են մահմեդականութեան, որ վերջապէս «այն անձը, որ կը ձեռնարկէ Իսլամի մէջ խառնակութիւն սերմանելու կամ ատելութիւններ և երկպառակութիւններ սնուցանելու, մենք (այսինքն Մուստաֆա Քեամիլները) նրան կը նկատենք իբրև թշնամի: Ամեն իշխան, մեծ կամ փոքր, որ յանձն կառնէ Թուրք Խալիֆի դէմ գործելու, մեր կողմից կը նկատվէր իբրև դաւաճան և կատվէր ու կարհամարհվէր բոլոր մահմեդականներից:» Բացի այս գոհարներից, Մ. Քեամիլը աւելացնում էր.

«Ման եկէք Իսլամի բոլոր երկրները, դուք կը հանդիպէք միայն Թիւրքիայի կուսակիցների: Այդ զգացումը վառ պահողները Թիւրքիայի գործակալները չեն, ինչպէս կարծում են շատեր, այլ Իսլամի ինքնապաշտպանութեան ոգին, այն բաղձանքը, որ ունի իւրաքանչիւր մահմեդական նոր դժբաղդութիւնների հանդիսատես չը լինելու համար, և բոլորի այն համոզումը թէ Թուրք իշխանութեան կործանումը կամ տկարացումը կը լինէր Իսլամի, իսլամութեան կործանումն իսկ:»

Ահա այս մարդն է, որ այժմ խօսում է մի այլ հարցի մասին, որին արձագանք են տուել եւրոպական թերթերը և Բագուի «Հայաթը»: Յօդուածի վերնագիրն է «Վիլհէլմ կայսրը և Իսլամը», և տպվել է «Բեռլիներ Տագեբլատ»-ի մէջ:

Յօդուածագիրը՝ տարիներից ի վեր—կարդում ենք «Հայաթում»—կռիւ է մղում Անգլիայի հետզհետէ աճող ազդեցութեան դէմ, Եգիպտոսում, և աշխատում է իր հայրենիքի անկախութիւնը ապահովել: Քեամիլ փաշա Եգիպտոսի անկախութիւնը պահպանելու և մահմեդական համայն ազգերի միացման գաղափարը տարածելու համար, չը նայած իր դէմ կանգնող արգելքներին և խոչընդոտներին, կարող եղաւ Կահիրէում սարքել մի խոշոր արաբերէն օրգան:

Քեամիլ փաշայի վերոյիշեալ յօդուածը խօսում է մահմեդականների՝ եւրոպական մի որ և է պետութեան հետ համաձայնութեան գալու, դաշնակցելու գաղափարի մասին: Նա գրում է. «Մահմեդական աշխարհի ու եւրոպական պետութիւններից մէկի միջև համաձայնութիւն առաջ բերելու միտքը վաղուց զբաղեցրել է խելօք մարդկանց: Յայտնի է, որ մենք՝ մի կրօնով և մի զգացմունքով ոգևորված երեք հարիւր միլիօն անձերս, մի խոշոր ուժ ենք ներկայացնում. Նապօլէօն I-ը իր ամբողջ կեանքի ընթացքում երազեց՝ մահմեդականների կայսր հռչակվել և եւրոպայից աքսորվելուց յետոյ, իր կեանքի վերջին տարիներում զղջաց, որ Իսլամին չէր դիմել և Եգիպտոսի, Արաբիայի և Դամասկոսի սուլթան չէր դարձել: Վիլհէլմ II կայսրը, կարծում եմ, չեմ սխալվի, եթէ ասեմ, որ շարունակ մտածել է երկրագնդի երեսին ամեն կողմ տարածված, և մի գեղեցիկ օր աշխարհի գործերում կարևոր դեր ու ազդեցութիւն գործադրելու կոչված իսլամական ուժի մասին: Վիլհէլմ կայսրը այցելել է մահմեդական ազգերին և ամեն մի այցելութեան ընթացքում արտայայտել է դէպի նրանց համակրանք և սէր:»

Քեամիլ փաշայի կարծիքով՝ եթէ իսլամական աշխարհը կարող է երբ և իցէ եւրոպական պետութիւններից մէկի հետ բարեկամական կապերով կապված մնալ, այդ պետութիւնը կարող է միայն Գերմանիան լինել, որովհետև նա յաճախ է պաշտպան կանգնել մահմեդականներին: Վերջին անգամ երբ Տանժէ (Մարօկկօ) այցելեց, Ֆէզի կառավարութիւնը հարստահարութիւնից ազատ պահեց և բացարձակապէս պահանջեց Մարօկկօյի անկախութիւնը:

Սակայն իսլամի և Գերմանիայի միջև բարեկամութեան կապի ամրապնդումը կախված է մի հարցի լուծումից, առանց որի անկարելի է այդ համաձայնութիւնը: Այդ հարցը Եգիպտոսի հարցն է: Գերմանիան այնպէս էր կարծում, որ Անգլիայի կողմից Եգիպտոսի գրաւումը՝ չէր կարող իր և մահմեդականների միջև բարեկամութիւն հաստատելուն վնասել: Դա՝ Եգիպտոսի հարցի վերաբերմամբ, սխալ հայեցակէտ է: Գերմանիան Եգիպտոսից օգտվելով կարող էր Ֆրանսիայի հետ բարեկամութիւն հաստատել: Եթէ Վիլհէլմ կայսրը՝ Ֆաշօդայի միջադէպի ժամանակ անգլիական քաղաքականութեան հակված չը լինէր, և ինչպէս վերջերս Տանժէ այցելեց, այնպէս էլ այն ժամանակ Ալէքսանդրիա այցելած լինէր, այդ կերպով այժմ միջազգային դրութիւնը բոլորովին այլ կերպարանք կը ստանար: Ալէքսանդրիա այցելութեամբ Անգլիայի հմայքը կը տկարանար և Գերմանիան կը շահէր իսլամական աշխարհի բարեկամութիւնը:

Սակայն Գերմանիան անգլիական քաղաքականութեան կողմնակից եղաւ: Յօդուածագրի կարծիքով Եւրոպայի համար ամենամեծ վտանգը «դեղին վտանգը» չէ, այլ անգլիական վտանգը: Գերմանիան չը պէտք է անտարբերութեամբ վերաբերվի դէպի անգլիական իմպերիալիզմը, նուաճողական վտանգաւոր քաղաքականութեանը: Պէտք է որ Գերմանիան անտարբերութեամբ չը նայի Անգլիայի կողմից Թիւրքիայի և Եգիպտոսի նուաճման վրա: Գերմանիան պէտք է Եգիպտոսի հարցը լուծէ, վերադարձնելով նրան իր անկախութիւնը, քանի որ Անգլիան տիրապետում է Եգիպտոսին և Կարմիր ծովի վրա:

«Իսլամից դուրս, Թիւրքիայից դուրս, Խալիֆից դուրս չը կայ փրկութիւն: Յամենայն դէպս Իսլամը կարող է բարեկամութեամբ կապվել այն պետութեան հետ, որ կաշխատէ Եգիպտոսը ազատել, փրկել, որովհետև Եգիպտոսը իսլամական աշխարհի հոգին է, իսկ Կ. Պօլիսը նրա գլուխը:»

«Հայաթը» իր կամ Քեամիլ-փաշայի բերանով—որովհետև յայտնի չէ թէ որտեղ է վերջանում Քեամիլ-փաշայի խօսքերը—ասում էր այն, ինչ բոլորն են կրկնում, որ Կ. Պօլիսը գլուխն է իսլամական շարժման: Բայց այս բացարձակ խոստովանութիւնը չը պէտք է արգելէ անշուշտ «Հայաթը», որ դարձեալ երդումնապատառ լինի, ուրանայ և զրպարտութիւն անուանէ ճշմարտութեան խօսքը:

ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Թաւրիզ, նոյեմբերի 13-ին

Պարսկա-տաճկական սահմանային գծի հարցը յաճախ թիւրիմացութիւնների և տարաձայնութիւնների պատճառ է դառնում երկու հարևան պետութիւնների միջև:

Դեռ չէ անցել երկու տարին, որ հռչակաւոր շէյխ Իբրահիմի որդին, շէյխ Մահմադ Սըդիկը անցաւ պարսկական հողը, բերդ շինեց, պատճառաբանելով, որ տաճկական հողումն է: Յաղթութիւնն էլ մնաց նրա կողմը և բերդը մինչև այժմ էլ կանգուն է, թէև պարսից կառավարութիւնը զօրք ուղարկեց պաշտպանելու համար:

Պարսկա-տաճկական այժմեան ընդհարումն էլ առաջացել է սահմանային գծի խնդրից, թէև որոշ դեր են խաղացել և այլ դրդիչ հանգամանքներ:

Այժմ արդէն թիւրքական զօրքը, միացած քիւրդերի հետ, մտել է պարսկական հողը և վերցրել ամբողջ մի գաւառակ: Դա Լահիջանն է, որը համարվում է Ուրմիի գաւառամասերից մէկը և կից է Սօուղ-Բուլաղին:

Երկու կողմից պատրաստութիւններ են տեսնվում: Պարսից զօրքը անընդհատ և անդադար կերպով գնում է և կենտրոնանում Սօուղ-Բուլաղում:

Բայց ինչպէս ինչից առաջացաւ այդ ընդհարումը, և ինչ դրդիչ պատճառներ են դեր խաղացել:

Սկսենք մի փոքր հեռուից և խօսենք փոքր ինչ մանրամասն:

Պարսկա-տաճկական սահմանագծի վրա ապրում էր քիւրդական Մանգուր աշիրէթը, Բայազիդ աղայի ցեղապետութեամբ: Բայազիդ աղան առհասարակ անհանգիստ կեանք էր վարում և անընդհատ ասպատակում էր և աւերում շրջակայ գիւղերը: Իսկ անցեալ 1902 թւին ապստամբում է և հրաժարվում է պարսից կառավարութեան հասանելիք տուրքը վճարելուց:

Պարսից կառավարութիւնը ըմբոստ ցեղապետին լռեցնելու համար, ուղարկում է Սօուղ-Բուլաղի դատաւոր պրինց Իմամ ղուլի Միրզային 6—7,000 զինուորներով և մի քանի թնդանօթներով: Բայազիդ աղան, առանց խիստ և ուժեղ դիմադրութեան, թողնում է իր գիւղերը և յետ նահանջում տաճկական հողը, սպասելով մի պատեհ և յաջող առիթի վրէժխնդիր լինելու կառավարութիւնից:

Եւ ահա շատ շուտով առիթը ներկայանում է:

Ներկայ տարվայ օգոստոս ամսի սկզբներին, Ուրմիի շրջանի մաքսատների ընդհանուր կառավարիչ միս. Leleux շրջում է և նկատում է մի շատ կարևոր կէտ նոր մաքսատան համար: Դա Լահիջան գաւառամասն է: Եւ գաւառամասի սահմանային գծի վրա ձեռնարկում է մաքսատան շէնքի կառուցումը:

Այդ կարևոր պունկտը մատնացոյց է անում մամաշների ցեղապետ Մահմադ աղան, որին յանձնված էր կառավարութեան կողմից ամբողջ սահմանային գծի պաշտպանութեան գործը: Նա յայտնի է իր քաջութեամբ, իսկ կառավարութիւնից էլ ստացել է ամիր էլ ըշայրին (աշիրէթների հրամանատար) տիտղոսը: Նա իր այդ քայլի մէջ չէ առաջնորդվել միտումաւոր կերպով և կամ թշնամական դրդումներով: Նա այդ կէտն է ցոյց տուել, մանաւանդ աչքի առաջ ունենալով այն երևոյթը, որ յաճախ մաքսանենգութիւններ են կատարվում այդ մասում:

Թուրքերը նկատում են մաքսատան շէնքի կառուցումը, նրանք ոչ միայն արգելում և դադարեցնում են աշխատանքը, առարկելով, որ դա տաճկական հողի վրա է, այլ և քանդում են շէնքը:

Այդ մաքսատունը առիթ է դառնում Բայազիդ աղայի համար: Նա աւելի հեռուն է գնում: Նա պնդում է, և այդ մասին զեկուցում է տալիս Բաղդադի Մուշիրին, որ ոչ միայն այդ մասը, այլ և ամբողջ Լահիջանը Ուշնի և Սարդաշտ գաւառակների մի մասը տաճկական հող է: Որպէս թէ,—այդպէս է նա պատճառաբանել—ժամանակին այդ յիշված գաւառամասերը պատկանելիս են եղել իրանց պապերին, բայց պարսից կառավարութիւնը զանազան կեղծ և խաբէական միջոցներով խլել է այդ բոլորը, նրանց էլ դարձնելով պարսկահպատակ: Բայազիդ աղան չի մոռանում աւելացնել, որ, եթէ իրան տրվի զօրք, շատ դիւրութեամբ կարող է յետ վերցնել այդ կալուածները, պայմանով, որ այդ գիւղերը, իբր սեփականատիրոջ, մնան իրան:

Թէ ինչ բանակցութիւններ են եղել և արդեօք համաձայնութեան յանգել են, մեզ յայտնի չէ, միայն այսքանն է պարզ, որ շատ կարճ ժամանակամիջոցում 300 հետևակ և ձիաւոր ասկարներ, լեռնային թնդանօթներով, անցնում են սահմանը և հասնում են Լահիջան գաւառամասի Փասուա գիւղում, որը տաճկա-պարսկական սահմանից հեռու է մօտ 40 վերստով: Տաճկական զօրքը գտնվում է Աբդուրահման էֆէնդու և մի բիմբաշու հրամանատարութեան տակ:

Հին և Նոր Լահիջան գիւղերը, որոնք գտնվում են ճանապարհի վրա, տաճիկները տիրել են առանց որ և է դիմադրութեան:

Մահմադ աղան իմանալով տաճիկ կառավարութեան մտադրութիւնը, զօրքը դեռ սահմանից չանցած, թողնում է իր գիւղը—Փասուա, վերցնում իր շարժական կայքը և ընտանիքը, և գալիս հաստատվում է Սուլդուզում: Աշիրէթի միայն մի մասն է հետևում Մահմադ աղային: Նրա եղբայրը՝ Սուլէյման աղան, աշիրէթների միւս մասով, մնում է Լահիջանում: Տեսնելով իր անզօրութիւնը տաճիկ զօրքի դէմ, Սուլէյման աղան ստիպված միանում է նրանց հետ, ապստամբելով պարսից կառավարութեան աչքում:

Սուլէյման աղայից զատ, տաճկաց զօրքերի հետ միանում են նաև Փիրան աշիրէթը՝ Մահմադ ամին ցեղապետի հրամանատարութեամբ, Շէյխ Միրզա և Շէյխ Հաջի սէիդ Աբդուլլահ ցեղապետները, մի քանի հարիւր ձիաւոր կռւողներով: Տաճկաց զօրքին միացած պարսկահպատակ քիւրդերի թիւը, ի հարկէ սկզբներում հասնում էր մօտ 1000, որոնք բոլորովին ազատ են համարում իրանց հարկերից և այլ տուրքերից:

Բացի պարսկահպատակ քիւրդերից, կռւողու է եկել նաև Բայազիդ աղան մի քանի հարիւր ձիաւորներով: Սահմանաբնակ Նալու-ղին աշիրէթն էլ նստել է Փասուա գիւղում, իսկ Շինարաղ գիւղում 100 ասկարներ: Այնպէս որ նոյեմբերի սկզբներում պատերազմական բեմում կային պատրաստի մօտ 700 հոգի տաճկական կանոնաւոր զինուորներ և երկու հազարից աւելի քիւրդեր՝ պարսկահպատակ և տաճկահպատակ:

Եւ այդ բանակը գտնվում էր պարսկական հողի վրա:

Այս հանգամանքի վրա է հրաւիրում վալիաթը տաճկաց հիւպատոսի ուշադրութիւնը և բացատրութիւն ուզում:

Հիւպատոսը բաւականին երկդիմի և խորամանկ պատասխան է տալիս.

«Մեր կանոնաւոր զօրքը, ասում է նա, չէ անցել պարսկական հողի վրա, քիւրդ աշիրէթներ կը լինեն, կարող էք պատժել»:

«Կանոնաւոր զօրքը չէ անցել սահմանը»: Ահա հէնց այս խօսքերի մէջ է կայանում տաճկաց երկդիմի վերաբերմունքը: Որ տաճիկ զօրքը մտել է Լահիջան, դա արդէն աչքառու փաստ է: Ուրեմն այդ գաւառը տաճկական հող կարող է լինել: Այդպէս էլ է տրամադրում մտածելու հիւպատոսի պատասխանը:

Եւ վալիաթը անմիջապէս 5 փօւջ է դնում մոբիլիզացիայի մէջ.—Երկու փօւջ Թաւրիզից, մէկը՝ Մակուից, մէկը՝ Ուրմիից և մէկն էլ Մարաղայից: Այդ 4 փօւջներին կարգադրված էր պատրաստ լինել պատերազմական վայրում մինչև նոյեմբերի 20-ը, բայց որոշված ժամանակին տեղ են հասած լինում միայն 1000 հետևակ զինուորներ: Իսկ միւսները արագ կերպով գնում են:

Չը մոռանամ ասել, որ փօւջը բաղկացած է 800 հոգուց: Մարաղայի փօւջի պետը մի հայ է, Փարուխ-խան Ենիկօլօպեան: Այս հայ զինուորականը մասնակցել է մի քանի կռիւների և յայտնի է իբրև հմուտ և խելացի զինուորական: Հրամանը ստանալուց 3 օր չանցած՝ նա արդէն որոշված տեղումն էր իր գնդով:

Բացի այս 5 փօւջներից, պատերազմական վայր է գնացել նաև յայտնի ծերունի (90 տարեկան) Սալիմ խան Բիադըր-էլ-Մուլքը, իր ձիաւոր զօրքով:

Այսքանով չէր բաւականացել վալիաթը: Նա, դեռ Թեհրանից դուրս գալիս, հեռագրում է Թաւրիզ և կարգադրում, որ 3000 կռւողներ՝ Ղարաբաղից և Շայսէվաններից պատրաստ լինեն Թեհրանի ճանապարհի վրա, որպէս զի ինքը անձամբ տեսնի, հրահանգներ տայ և ճանապարհի:

Այս բոլորի հետ միաժամանակ տանում էին Ուրմիայից Թնդանօթներ և վրաններ։ Իսկ Հաջի Մուստաշար-Դօվլէն գնաց ընդհանուր հրամանատարութիւնը ստանձնելու։

Այսպէս ահա, երկու բանակներն էլ օրէց օր ստւարանում են և կանգնած են ճակատ առ ճակատ, իրարից ոչ այնքան հեռու, մօտ 30 վերստ հեռաւորութեան վրա։

Մինչև այժմ դեռ որ և է աչքի ընկնող և ուշադրութեան արժանի ընդհարում չէ եղել։ Բանակցութիւնները դեռ շարունակւում են երկու կառավարութիւնների միջև։ Գուցէ, և շատ հաւանական է, հարցը լուծվի յօգուտ Պարսկաստանի և առանց արիւնահեղ ընդհարումների և լուրջ հետևանք ունենալու։

Ե. Ֆրանգեան

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Վան, հոկտեմբերի 15-ին

Թալանի և սպանութեանց մասին չէ, որ պիտի գրեմ, Թէև այդ է սպասւում Թիւրքիայից ստացված նամակներից, որովհետև ճիշտը խոստովանելով, դրանք հիմակուհիմա այնքան էլ յաճախադէպ չեն. և վերջապէս այդ տեսակի լուրերը ձեզ համար էլ են կորցրել իրանց սենսացիօնալ յատկութիւնը, որովհետև ձեր հօրիզոնների վրա էս բոցավառվեց Թալանված ու կոտորված գիւղերի արիւնագոյն հրդեհը։

Նամակիս նիւթը պիտի կազմէ այն ոչնչացման սիստեմը, որ աւելի քիչ ահաբեկիչ է քան մահն ու Թալանը. բայց որ նոյնչափ և գուցէ աւելի ջնջող է ու կործանարար։ Դա յետնեալ տուրքերի գանձման նոր հրամանի այն իրագործումն է, որ կատարվում է այնքան վայրագ ու անխիղճ եղանակով։ Ամբողջ 21 տարվայ յետնեալ տուրքերը, Թէ հողային, Թէ անձնական պիտի գանձուեն. իսկ այստեղ չը կայ մարդ, չը կայ տուն, որ այդ տեսակ յետնեալ տուրքեր չունենայ, սկսեալ 200—400 ղուրուշից մինչև 1500—2000 ղուրուշ և աւելի։ Եւ ահա սկսված է հարկահաւաքման բարբարոս գործադրութիւնը. մէջ տեղ են բերուել հին ցուցակները, որ նշանակուած են անվճար մնացած տուրքերը, և դրանց համաձայն հաւաքումն է լինում։

Հետաքրքրական է այդ առթիւ պատահած մի միջադէպ։ Կանչվում է Վանի այն Թաղերից մէկի Թաղապետը, որ 1896-ի կոտորածին ամենից աւել զոհ է տուել և պահանջվում է նրանից հին տուրքերի ցուցակը. Թաղապետ—մի ծերունի հայ, բարեխղճաբար ներկայացնում է այդ ցուցակը, և երբ իրեն ոստիկաններ են տրվում պարտապաններին մատնանիշ անելու, նա առաջարկում է գնալ դէպի գերեզմանատուն, մեռելներից պահանջելու համար. «Սպաննեցիք—ասում է ալատախօս ծերունին—բոլորին էլ սպաննեցիք. գնանք գերեզմանատուն. այնտեղ գուցէ հնարաւոր լինի գանձել»։

Փաստն ըստ ինքեան բնորոշ է. բայց կառավարութեան համար տուած կամ ողջ նոյն է. մեռածների ու բացակաների փոխարէն շատ անգամ բարեկամներն ու ազգականները պարտական են վճարել, եթէ կան։ Իւրաքանչիւր Թաղի հարկահաւաքը ոստիկաններով շրջում է շուկայում. նա բռնում է պատահածի օձիքը, և յաճախ ծեծելով (եթէ խիստ պատուաւոր չէ) բանտ է առաջնորդում, այնտեղ է գլխաւոր հարկահաւաքը, իւր պատկառելի ոստիկանական շքախմբով. սկսվում է հարց ու փորձ. և վախճանն ընդհանրապէս լինում է կրկին ծեծ, եթէ երբեք նա յանձն չի առնի անմիջապէս տեղն ու տեղը վճարել այնպիսի գումար, որ ինքը երևակայել իսկ չէր կարողացել, և որ խիստ խանգարում է տարեկան իւր ծախսերի ամբողջ հաւասարակշռութիւնը. և երբ ծեծն էլ անզօր է անցնում, նա բանտ է ձգվում. հոգ չէ Թէ դուրսը ընտանիքը սովից կը կոտորուի ու այսօր քաղաքում լոկ տուրքի համար 250—300 հոգի բանտ են գտնվում։

Բայց արդեօք որտեղից կարելի է դրամ վճարել, երբ երկրում արդէն այնքան քիչ չափով է դրամ գտնվում, որ տեղական ազգաբնակութեան տարրական պահանջներին իսկ բաւարարութիւն տալ չէ կարող։ Վանում դրամատէր, ոչ միայն բառիս բուն իմաստով, նոյն իսկ երկրորդական ու երրորդական իմաստով չը կայ. այլ կան լոկ փոքր ի շատէ բարեկեցիկներ, որոնք առօրեայ անհրաժեշտ ապրուստից զատ, կարող են մի փոքր աւելորդ ծախսեր Թոյլ տալ իրենց. բայց այդպիսիների Թիւն իսկ սահմանափակ է. ամենամեծագոյն մասը օրէցօր հազիւ ապրող մարդիկ են կազմում. իսկ վերջերս այդ օրէցօրեայ ապրուստն էլ է կտրուած, այնպէս որ ամբողջական աղքատութիւն է տիրապետում։

Կառավարական այն արգելքը, որ դրուած է Կ. Պօլսի և արտասահմանեան յարաբերութեանց համար (և որ վերջերս շատ աւելի խստացաւ) և ճանապարհների անապահովութիւնը բացարձակ կղզիացման է դատապարտել ուրիշ շրջանակների հետ և Վանի շրջանակը, որ առանց այն էլ հեռու էր առևտրական կարևոր ճանապարհներից. և այդ կղզիացումը վերջ է տուել խիստ առևտրական և արհեստաւորական շահերին. երկրի մէջ նոր դրամ չի մտնում, որով տեղական աղքատացած ազգաբնակութիւնը գնում է միայն այն, ինչ որ անհրաժեշտ է քաղցից չը մեռնելու համար. ըստ այդմ վերջ են գտնում ամեն տեսակի շահերը, քանի որ ոչ երկրում սպառող կայ, ոչ դրսից են գալիս, որով և օրէցօր շահող և ապրող մարդիկ զրկվում են իրենց առօրեայ ապրուստից ևս. մինչ միւս կողմից ապրուստը մնում է նախկին հին կամ աւելի բարձրանում։

Եւ ահա այս պայմաններում է վրա հասնում կառավարական կտրուկ հրամանը—գանձել յետնեալ տուրքերը. ժողովրդի մէջ եղած դրամը դուրս է կորզվում, Թողնելով նրան աւուր հացի կարօտ։ Բայց արդ չէ բոլորը. յետնեալ տուրքերից անկախ՝ կառավարութեան կարգադրութեամբ, երկու նոր տեսակի տուրքեր ևս աւելացան. 1) անհատական կոչուած տուրք, որ պարտական են վճարել բոլոր հպատակները և 2) յաւելեալ կոչված տուրք, որ պարտական են վճարել այն հպատակ ժողովուրդը, որոնք զինուորական տուրք են տալիս։ Անհատական տուրքը վճարվում է ըստ կարողութեան, իսկ յաւելեալ տուրքը զինուորական տուրքի 100-ին 30 յաւելմամբ։

Եւ այսպէս կառավարութիւնը ջանք է անում լոկ դրամ դուրս կորզել ժողովրդից. ամենևին հոգը չէ Թէ ազգաբնակութիւն կարող է վճարել Թէ ոչ։ Աւելի պայծառ գաղափար կազմելու համար վերցնենք իբր օրինակ մի միջակ կարողութեան տէր տեղացի և տեսնենք տարեկան նրա շահն ու ծախսը, և պարզ կը լինի այնուհետև Թէ նա ինչ չափով հնարաւորութիւն ունի ներկայ պայմաններում այդ տեսակ տեսակ տուրքերը վճարել։ Վանի մէջ ամենաբազմաթիւ դասակարգ կազմում են արհեստաւորներն և մանր առևտրականները. միջակ կարողութեան տէր առևտրական կամ արհեստաւոր քաղաքացին վերջին տարիներս տարեկան միջին հաշուով հազիւ 15—30 լիրա կարող էր շահել (աւելի շահողները հազուագիւտ են և բացառութիւն են կազմում). և այդ չնչին գումարով նա պիտի հոգայ 5-ից մինչև շատ անգամ 9—10 հոգուց կազմված մի ընտանիք. այդ գումարով ի միջի այլոց հագուստ ձմեռուայ համար, վառելիք և վերջապէս հաց և ուրիշ ուտելիք պիտի հայթայթէր. Նախնթաց տարիները, շնորհիւ հացի և ընդհանրապէս ապրուստի աժանութեան, այդպիսի մէկը հնարաւորութիւն ունէր լաւ կամ վատ ապրելու. իսկ այս տարի բացառիկ հանգամանքներ են ստեղծուած. նախ՝ կարող ենք ասել առևտուրի խիստ անկումն, որ ոչ մի տարի չէր տեսնուած և երկրորդ՝ որ աւելի ծանրակշիռն է՝ ապրուստի և յատկապէս հացի Թանգութիւնը։ Հացի խնդիրն է հիմա այն հրատապ, կենսական հարցը, որ անլուծանելի կերպով դրուած է ողջ ժողովրդի հանդէպ։ Այս տարուայ հունձքը, հակառակ ժողովրդի սպասածին, չափազանց պակաս դուրս եկաւ. ցորենի չափը հիմա իսկ, երբ հազիւ են վերջացած կալերը 54—60 ղրուշ է. և հաւանականութիւն կայ, որ կարող է դեռ էլ աւելի բարձրանալ. մինչդեռ 5-9 հոգուց կազմուած ընտանիքը սպառում է տարեկան մօտաւորապէս 18-30 չափ ցորեն. և երևակայեցէք, որ 15-20 լիրա շահող ընտանիքի տէրը 10-17 լիրա պիտի ծախսէ միայն հաց գնելու համար, իսկ մնացածով պիտի հոգայ նրա ծախսերը. և զարմանալի է այս երկիրը. ցորենն է այն աստիճանակէտը, որին կապուած են ուտելիքների և նոյն իսկ վառելիքի գները. եթէ նրա գինը բարձրանայ, կը բարձրանան և միւսներինը, բնականաբար այս պարագային իւրաքանչիւր ընտանիքի տէրը պիտի սահմանափակուի ապրուստի minimum-ով, գնելով միայն այն, ինչ որ անհրաժեշտ է քաղցից ու ցրտից չը մեռնելու համար։

Եւ սակայն ծախսերից դեռ դուրս մնացին պետական տուրքերը արդի կամ յետնեալ։ Ահա վրա է հասնում հարկահաւաքը զապթիաներով։

—Տուր.

Ի՞նչ տայ. չէ՞ որ իր շահած 15—20 լիրայի իւրաքանչիւր փարան իր յատուկ պահանջն ունի։

—Տուր, կրկնվում է անողոք հրամանը, ապա Թէ ոչ... ծեծ ու բանտ է սպասում նրան։ Եւ տալիս է խեղճը. տալիս է իր առօրեայ ապրուստի դրամը, իր արիւն քրտինքով ձեռք բերած փարաները, որպէս զի այնուհետև իր ընտանիքը մեռնի քաղցից։ Բռնակալութեան որկորը խորն է ու անյատակ. սպունգի նման այնտեղ է քամում տառապող ժողովուրդն իր վերջին կոպէկները՝ իր ապրուստն ու կեանքը։

Վերջերս իբրև Թէ յատուկ կոմիսիա է կազմված, անիրաւ և իրաւացի պահանջները ճշտելու համար, բայց քանի՞ կոպէկ արժ են այդպիսի կոմիսիաները, երբ արդէն ժողովուրդը անիրաւ կամ իրաւացի հնարաւորութիւն չունի վճարելու. և վերջապէս հարց է, Թէ դրանք ինչ չափով իրանց նպատակին կը ծառայեն։

Իրերի նոյն դրութիւնը, ինչպէս հաղորդում են, աւելի վատԹար կերպով տիրում է Բիթլիսի վիլայէթում, ուր միշտ հարստահարութիւնները խոշորացոյցային չափերի են հասնում։

Ձմեռը վրա է հասնում կամաց-կամաց, ժողովրդի դրամները դուրս են կորզվում, մինչ ցորենն և ուտելիքները Թանգանում են. ուրիշ տարիներ ցորենատէրերի մօտ հնից մնացած և ամբարված ցորեն էր լինում, որ նեղ օրերին դուրս էին բերվում և Թէև Թանգ, բայց ծախվում էին, հրապարակի վրա վերջապէս հաց գտնվում էր. իսկ այս տարի, ինչպէս հաւաստիացնում են, ողջ շրջանակում ցորեն չը կայ, ոչ հին, ոչ նոր։ Ի՞նչ պիտի լինի ձմեռը. ինչո՞վ պիտի ապրի աղքատ ազգաբնակութիւնը. ահա ծանրակշիռ ու կենսական խնդիրը. ո՞վ պիտի լուծէ այդ—ոչ ոք. ո՞վ է մտածում այն ժողովրդի մասին, որին Աստուած էլ մոռացութեան է տուել...

—

Մինչև հիմա քաղաքի վիճակն էի նկարագրում ուր ժողովուրդը համեմատաբար աւելի բարւոք պայմաններումն է գտնվում, և ուր հարստահարութիւնները համեմատաբար աւելի փոքր չափով են կատարւում. իսկ ի՞նչ ասենք գիւղերի մասին, ուր աղքատութիւնը շատ աւելի ահռելի ծաւալի է հասած, ուր հարկահաւաքների ու տօրին պաշտօնեաների սանձարձակութիւնն այն կէտին է հասած, որից այն կողմ մահ կայ և միայն լաւագոյն։

Թիւրքահայ գիւղացու վիճակը այն խնդիրներից է, որ հետզհետէ բարդանում և աւելի անլուծելի է դառնում, դարէց դարի աւելի ու աւելի ընկնում է գիւղացիների տնտեսական մակարդակը և ամբողջ դասակարգը մատնվում է մասսայական մուրացկանութեան. Նրանց վրա գործ դրուած հարստահարութիւնը շատ անգամ նկարագրուած են մամուլի էջերում։

Այս տարի առանձնապէս կրիտիքական է նրանց վիճակը, ցորենը շատ տեղ մէկին մէկ, իսկ արդիւնք չէ տուել և ստացած ցորենը այնչափ նուազ է, որ ոչ մի կերպ բաւարարութիւն չէ կարող տալ գիւղացու հազար ու մի դարդերին։ Կալերը վերջացած են, ցորենը շեղջուած է այնտեղ և սակայն գիւղացին իրաւունք չունի այդ ցորենից մի հատիկ իսկ տուն տանելու. շեղջը կնքուած է. ահա գալիս է գիւղի տասանորդները կապալով վերցնող վաշխառուն. Նա վերցնում է իր պահանջը ոչ միայն ցորենից, այլ երկրի բոլոր արդիւնաբերութիւններից. գալիս է հարկահաւաքը. նրա պահանջներին վերջ չը կայ. գալիս է գիւղացու պարտատէրը, որից նա ձմեռուայ նեղ օրերին դրամ կամ ցորեն է պարտք վերցրել, կալերին կրկնակի վճարելու պայմանով. նա էլ է առնում իր պահանջը ու փոքրանում է ցորենի դեղջը կամ սպառված բոլորովին. բայց դեռ պահանջողները չեն վերկացած, գալիս է այս ինչ Թուրքը կամ քուրդը, որ գիւղերն ընկած ձմեռուայ համար իրան պաշար է հաւաքում. նրա պահանջը ապօրինի է. բայց խօմ կարելի է մի միջոց գտնել. յաճախ նա մեղադրում է գիւղական այս կամ այն յանցանքով, որից յետոյ կաշառքի կերպարանքով ցորեն կամ ուրիշ ուտեստ է դուրս կորզում նրանից և գալիս է ահաբեկված գիւղացին, որովհետև գիտէ հետևանքները ու զարմանալի են այդ փոքր բռնակալները. Նրանք հիանալի միջոցներ գիտեն ստեղծել իրանց նպատակին հասնելու համար։

Իբրև օրինակ յիշենք վերջերս քաղաքից ոչ շատ հեռու եղող գիւղերից մէկում պատահած մի դէպք։ Վանի մէջ յայտնի ոճրագործ ու աւազակ Ամար օնբաշի, որը սակայն զափթիայի զգեստ է հագած, գիւղերն է ընկնում, ձմեռվայ պաշար հաւաքելու համար. Նա գնում է հայոց Ջորի Աստուածաշէն գիւղը, զինված ոտքից գլուխ. սպասում է մի քանի օր, ապա մի գեղեցիկ օր յայտարարում է, Թէ այս ինչ գիւղացին գողացել է իր քսակը. հաւաքվում են գիւղի մեծերը գիւղացուն արդարացնելու համար. բայց Ամար օնբաշին այդպիսի ձևակերպութեանց կարևորութիւնը չէ տալիս. «Ես Թքել եմ ձեր խաչի, աւետարանի, եկեղեցու, Քրիստոսի, Աստծու վրա էլ. ինչ կարևորութիւն. ես կը հաւատամ Թէ նա չէ գողացել այն ժամանակ միայն, երբ նա իր ատամներով շան լակոտ բռնած՝ պոչի ծայրից, կը բերէ ու կը դնէ ձեր եկեղեցու սեղանի վրա». Նպատակը պարզ էր բոլորի համար. գիւղից «վազ գալու» համար կաշառք էր ուզում։

Ես կրկնեցի այն, ինչ որ կրկնված ու լսված է հազար անգամ. արիւնալի վիրաւորանք, որ Թափանցում է տանջված ժողովրդի ամենասրբազան զգացմունքներն. և սակայն գիւղացուն ծռում է իր գլուխը մեծ ու մանր բռնակալների առաջ, տալիս է նա, տալիս է, ով որ պահանջում է. տալիս է մինչև ցորենի վերջին հատիկը. և այնուհետև անձնատուր է լինում բաղդի խաղերին։

Աշուն է. վրա է հասնում այս տեղերի երկարատև ձմեռը, և այս տարի, ամեն տարիներից աւելի անպտուղ, ամեն տարիներից աւելի սարսափով է ծանրացած ողջ երկրի վրա. անցեալ ձմեռը արդէն քանի քանիները գիւղերում մեռած սովից ու ցրտից. իսկ ինչ պիտի լինի այս ձմեռը. սովածների ահագին խումբ պիտի լցվի քաղաք. բայց քաղաքն էլ չէ կարող կերակրել նրանց։ Եւ այսպէս դանդաղ ու մարտիրոսական մահով մեռնում է ողջ երկիրը, բայց ոչ Թէ սպանութիւններից, կոտորածներից, այլ նիւԹական տագնապից սովից։ Եւ այս դրութեան մէջ անհրաժեշտօրէն պիտի գանձուեն պետական բոլոր տուրքեր. արդեօք որտեղից,

Երևի այդ մարտիրոսական մահվան համար է, որ Պօլսի ժիր ու գործունեայ 11 արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները շնորհակալութեան ուղերձ են ստորագրել իր հպատակների համար գիշեր ցերեկ տքնող ու մտածող վեհ. սուլԹանին...

Ի՞նչպիսի ցինիկ վերաբերմունք տառապած ժողովրդի հանդէպ։

Վտարանդի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հայ-յեղափոխական Դաշնակցութեան արևմտեան բիւրօն Ժընևում, ուղղել է մեծ պետութիւնների դիպլոմատիական և եւրոպական մամուլի ներկայացուցիչներին հետևեալ շրջաբերական հեռագիրը։

«Հայ յեղափոխական դաշնակցութիւնը իր պարտքն է համարում յիշեցնել եւրոպական պետութիւններին, Թէ որքան և հաճոյք է պատճառում իրան ծովային ցոյցը Մակեդոնիայում ֆինանսական կոնտրոլ հաստատելու մտքով, նոյնչափ նա պատճառում է նրան իրաւացի անհանգստութիւն, ի նկատի ունենալով այն սպառնալիքները, որ անում է օսմանեան կառավարութիւնը։ որ տրամադիր է վրէժ առնել իր պարտութեան համար, կազմակերպելով Հայաստանի քրիստոնեաների նոր ջարդ։ Այդ ջարդերը արդէն սկսվել են Էրզրումի և Բիթլիսի վիլայէթներում։ Դաշնակցութիւնը արտայայտում է իր խիստ բողոքը Բերլինի դաշնագիրը ստորագրող դիպլոմատիայի հրէշաւոր անտարբերութեան դէմ հայ ազգի վերաբերմամբ, որին նա շարունակում է զոհ բերել ամենակատաղի և վայրագ ճնշման, առանց կեանքի և մարդկային ամենատարրական իրաւունքների որ և է երաշխաւորութեան։

Անգլիա։ Թէև հեռագրական տեղեկութիւն դեռ չունենք, գործադուլի պատճառով, բայց մայրաքաղաքից հասած լրագրներից իմանում ենք, որ Անգլիայում մինիստրութիւնը ընկել է և Էդուարդ Թագաւորը յանձնել է ազատամիտների կուսակցութեան պարագլուխ Կէմբել-Բաններմանին կազմել մինիստրութիւն։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ. պ. անդամների, որ ընկերութեան լիազօրների ընտրութիւնները նոր երեք տարվայ համար (1906—1909 Թ. Թ.) համաձայն § 66 կանոնադրութեան—նշանակված են.

3-րդ կարգի ընտրողների համար այս տարվայ դեկտեմբերի 11-ին, 2-րդ կարգի ընտրողների համար՝ դեկտեմբերի 18-ին, 1-ին կարգի ընտրողների համար դեկտեմբերի 26-ին։
1—1

ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ

Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար։
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5— 7 ժ.
հասցէ—Աբասաբադեան հրապարակ № 9,
մուտքը Շիկոֆիրկեան փողոցից № 1։
(եր. հ. կ.) 12—20

1866. Մոսկվա. 1870. Ս.-Պետեր. 1882. Մոսկվա 1896. Նիժնի-Նովգ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ
եւ ուրիշ ռետինէ գործուածքների համար
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ պարգևի
(GRAND-PRIX)
ՓԱՐԻԶԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՈՒՄ
արժանացաւ Ռուսաստանի համար
ՄԻՄԻԱՅՆ
ՌԵԶԻՆԵՂԷՆՆԵՐԻ
ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
ընկերութիւնը Ս. Պետերբուրգում որ հիմնված է 1860 Թւին։

Խնդրում է ամէն կրկնակօշիկ գնած ժամանակ ուշք դարձնել ներբանի դրօշմանիշի վրա, մանաւանդ ընկերութեան հիմնարկութեան Թւականի վրա— „1860“ և С.-ПЕТЕРБУРГЪ բառի վրա՝ կարմիր եռանկիւնու մէջը (գործարանի դրօշմանիշը)։

Մեծ քանակութեամբ վաճառում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՑՇԷԼԼԷՐԻ“
Առևտրական Տունը
Ս. Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Օդեսսայում, Եկատերինբուրգում, Ռոստովում (Դոնի վրա), Խարկովում, Իրկուտսկում, Տաշկենդում և
ԹԻՖԼԻՍՈՒՄ։
76—80

Լոյս տեսան և վաճառվում են ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

ԾՈՑԻ և ՊԱՏԻ 1906 Թ.

„ՇԻՐԱԿ“
Պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(Ութերորդ տարի)
համառօտ բովանդակութիւնը

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է վաճառականական, բժշկական, առողջապահական, բնագիտական, գիտական, կաթնատնտեսական, մեղուաբուծական, տնտեսական, ճանապարհորդական, բանաստեղծական, կենսագրական, գիւղատնտեսական, բանաստեղծական—ազգային քնար, պատմական—Այծեմնիկ՝ հայ հերոսուհու յաղթանակը Անիում, Լեզու կտրող՝ ճշգրիտ անցք, Ո՞վ էր Վարդան Մամիկոնեանը և այլ տեղեկութիւններ։ Վիճակագրութիւն հայերի—Թիւրքիայում, Պարսկաստանում և Ռուսաստանում, գլխաւոր բնակավայրերը (հայ-Թրքական կոտորածների առԹիւ)։ Զուարճալիք, բերուկներ, խնդիրներ, հանելուկներ, վիճակներ։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր և աֆորիզմներ, եկեղեցական և ազգային տօների բացատրութիւններ, հայոց հեթանոսական սովորութիւններ, Թռչնապահական, մեղուաբուծական, անասնապահական, բժշկական, առողջապահական տեղեկութիւններ. խորհրդածութիւններ հեղինակաւոր անձանց։ Ազգային քնար—բանաստեղծութիւններ. հայկական կեանքից և հայոց պատմութիւնից նշանաւոր դէպքեր—Թաթարների արշաւանքը. տնտեսական, արհեստագիտական խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւն, կենսագրութիւններ, նոր անեկդօտներ, առածներ, հանելուկներ, ժողովրդական–ազգային երգեր, լէլեներ։ արկածալի և հերոսական դէպքեր Զէյթունցիների և Սասունցիների կեանքից։ Տեղեկութիւններ մահմեդական վարդապետութեան մասին։

Իւրաքանչիւր օր, առաջին երեսների վրա տպագրված է միմի բանաստեղծական կտոր, համարեա բոլոր հայ բանաստեղծներից, որոնք արտայայտում են նրանց հայեացք դէպի ազգն ու հայրենիքը։

ՏԱԽՏԱԿԸ ներկայացնում է Արագածը, Շիրակի դաշտը հայ գուԹանաւորներով, Անիի աւերակների առաջ նստած հայ կինը հովուի սրնգի նուագի տակ փնտրում է իր հայրենիքի անցեալ փառքերը։ Նկարը զանազանագոյն է և կարող է սենեակի զարդ ծառայել։

ՊՐԷՄԻԱՆ միացրած է ծոցի օրացոյցի յաւելուածին մօտ 60 երես—«Վերածնութիւն Հայաստանի», հայերի մատուցած ծառայութիւնը ռուսներին Կովկասի տիրապետութեան ժամանակ, խոստումներ և յոյսեր Հայաստանի անկախութեան և այլն և այլն։

«Շիրակ» օրացոյցները զարդարված են մի շարք գունաւոր պատկերներով։

Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ.։ Գումարով գնողներին լինում է մեծ չափով զեղչ։

Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ“ Карапету Апинянъ.—արտասահմանից—Alexandrople, Karapet Apinian (Caucase).

Աւելի մանրամասն բովանդակութիւնը առանձին Թերթով տպագրված ցանկացողները կարող են ձրի ստանալ։
6—10

Կարապետ Ափինեան

Մի օրիորդ, որ գիտէ կարել, ուԹօել և երեխաներին խնամել ցանկանում է վերցնել պատուէրներ, նոյնպէս պատրաստ է տներում կարել և երեխաներին խնամել։ Հասցէն Песковская ул. д. Эфіанджіанца № 8. հարցնել Մնացականեանցին։ 1—3

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 26—100

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանօվի

Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելեֆօն № 791։ (ա. օ.) 38—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան

Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։
30—100

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 Թ.

„ՄՈՒՐՃ“
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., 1 ամսվան 1 րուբլի։ Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.), 1 ամսվան 1 ր. 20 կ. (3½ ֆ.)։

Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մարտի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի։ Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսաստանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ծավճավաձեան փողոց տ. № 12)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».

«Մուրճի» գործակալներ.
Աստրախան—Գ. ք. Մկրտումեան։
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և Յ. Քոչարեան։
Բիբի-Էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան։
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան։
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչի—պ. Արամ Յակոբեան (Սեծովեզերեայ շրջան)։
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Թիֆլիս—«Գուտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառ.
Վլադիկավկազ—Յ. ք. Սարիկեան (Հիւս. Կովկասի համար)։
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և Հ. Պանիրեան։
Եգիպտոս—դոկտոր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա)։
Էնզելի—պ. Գ. Մէլիք-Աբրահամեան։
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Աբգարեան։
Թէհրան—պ. պ. Ալէքսան Թումեանց և Լ. Բաբայեան։

1905 Թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտեմբերի 1-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը (10 ր.) միանուագ՝ կը ստանան, իբրև պրեմիա, պ. Առանձարի «ՎՇՏԻ ԾԻԾԱՂԸ»։ Նոր գրվող բաժանորդները այդ պրեմիայի փոխարէն, կարող են ստանալ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար։
4—5

ОТКРЫТА ПОДПИСКА
на еженедѣльную газету учащихся
„Э Х О“

Нашъ лозунгъ: „Свободная автономная школа, въ свободной Россіи!“

Редакція приглашаетъ учащихся всѣхъ среднихъ учебныхъ заведеній какъ мужскихъ, такъ и женскихъ принимать участіе.

Ближайшая цѣль редакціи, это сдѣлаться дѣйствительнымъ органомъ всѣхъ учащихся.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	Съ достав.	Безъ дост.	Съ перес.
На 1 мѣсяцъ	25 к.	20 к.	30 к.
„ 2 „	50 к.	40 к.	60 к.
„ 3 „	70 к.	60 к.	90 к.
„ 4 „	[illegible]	80 к.	1 р. 20 к.
„ 5 „	1 р. 10 к.	1 р. — к.	1 р. 50 к.

Подписка принимается въ конторѣ газеты, а также въ отдѣленіяхъ ред. конт. Въ I-й женской гимназіи ученицы VIII кл. Амираговой, во II-й женской гимназіи ученицы VII кл. Соболь, въ III-й женской гимназіи ученицы VII кл. Косабовой, въ III-й мужской гимназіи въ ред. газ. „Отголоски“, въ IV женской гимназіи ученицы VII кл. Трофимовой, въ музыкальномъ училищѣ ученика средн. курса А. Туманова.

Редакція и контора помѣщается въ I-й мужской гимназіи, входъ съ Гимназической улицы, въ помѣщеніи читальни, открыта отъ 10 до 12 ч.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.